



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտարային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԱՔՍ



„ԵՍ ԶՈՒՄՆ  
ԻՐԱ ՃԱՄՊՈՎ  
~~Կ Գ Ն Ա...~~“

---

Պետական Համարակազություն  
Յերևան.—1928

01 JAN 2009

19 NOV 2010

891.99  
12-85

ԱՐԱՔՈՒ

„ԵՍ ԶՈՒԵՆ  
ԻՐԱ ՃԱՄՊՈՎ  
ԿԳՆԱ...“

1007  
33645-

ՎԻՊԱԿ

ԸՆ 150  
28-5.

## 1.

Անտառը շնչում եր, անտառը խշում եր.  
անտառի փեշերով սլանում եր խոշորադեմ ձիա-  
վորը:

Դար ու փոսերով անցնում եր հոգնած ձին՝  
դոփելով գետինը. գարնան կանաչահոս քամին  
շոյում եր ձիու փրփրած սունդերն ու ձիավո-  
րի քրտնած ճակատը: Նրա ճակատը մերթ մոռալ-  
վում եր, մերթ պարզվում. հաստ շրթունքները  
մերթ ձգվում ելին, մերթ ծալքավորվում իրար  
վրա:

Նրա ճեռքերը վարժ ելին. ծգում եր ձիու  
սահնձը: Անտառն ու դաշտերը ծանոթ ելին նրան,  
ու նա մտերմական հայացքով եր նայում:

Անտառը վերջանում եր. յերկու կողմից սա-  
րեր ելին բարձրանում. նրանց միջև նեղ ու յեր-  
կար ձգվում եր գյուղի մուգ-կապույտ հորիզոնը:

Զիավորն անցավ գյուղի ճամպեն. գյուղն  
ամբողջովին յերևաց:

Յերկու տարի բացակայել եր իրենց գյու-  
ղից, յերկու տարի բանել եր հեռու հանքերում.  
այժմ գյուղն անպես փոխված եր յերևում ու  
հայացքն անպես ուսար:

Հեռու յեր յեղել—գյուղի պատկերն եր մոռացել, թէ խակապես գյուղն եր փոխված, մըտմըտում եր ձիավորը:

Արևամուան եր. կարմիր ու ծիրանի շողերը տենդորեն խաղացին ձիավորի աչքերը. շողերը ծգվեցին նրա կապույտ բլուզին ամրացրած՝ «Մոսլը»-ի կարմիր նշանին. նշանը շողաց գյուղի սկզբին:

Զին վնչացրեց տերաերի քանդված ջրաղացի մոտ. միքիչ ել անցներ, իրենց տունն եր: Նա սպասողական ու լարված հայացքով հետեւում եր գյուղի տնակներին:

Գյուղը խաղաղ եր. կայտառագեմ մանուկեները վազվում եին իրար քամակից, և ձիավորին հանդիպող աչքերն այնպէս վտիա եին ու այնպէս հյուրընկալությամբ եին ժամանում...

## 2.

Իր մի աչքի լուսի պես պահած՝ մի հատիկ յեղը, արեկ մայր մանելու հետ, Մուքելը գոմը քշեց ու վերադարձավ, գլխիկոր նստեց իրձիթի շեմքում:

Մուքելի տղան շեմքի մեջտեղը կանգնած՝ փայտ եր տաշտացում, հետն ել մեղմ սուլում:

Մուքելը գլուխն որորում եր.

Գարունքանում ու, մի բուօք սերմացու

նը նստել եր կողքին. կարծես նոր սիրահարներ լինելին,—կամացուկ խոսում եին:

Նոյեմը հոր կապոցներն եր բացում. Սլեքսանն ամեն մեկի համար մի-մի նվեր եր բերել: Յերեխաները մերկ-մերկ թափվում ելին նվերների վրա ու կրծքներին սեղմում:

Թելից հետո Սլեքսանը յերեխաներին շուրջը հավաքած՝ իրեն ընկերների նկարներն եր ցուց տալիս: Յերեխաները հետաքրքրությամբ նայում ելին նկարներին, իրար ձեռքից խորու ելին և լսում Սլեքսանի տեղեկությունները նրանց մասին:

— Երեխեք ջան, սրանք իմ ընկերներն են, հանգերումն իրար հետ ելինք բանում... Այ. տեսնում եք ես մարդին, —ցուց տվեց մի նկար՝ կարճահասակ, գեմքը յերկարագուն, այտերի վոսները ցցված մի բանվոր եր:

Քելը նայում խոժոռեց Սլեքսանն ու շարունակեց.

— Մափկ տառ կախ բանում ելինք, մին ել՝ կողքի խրձիթից դուլթացել եր հանքի տակ... ըի իրիկունը» մոռացած բարկայշկեցի ու դուրս նեղ ձամպին, զորի վերջում խաչված ուն տապես կանգնել եր գյուղի ժամը:

Ոհանի կինն ամեն կիրակնամուտ ժամ եր գնում, աղոթում: Ելի կիրակնամուտ եր. յերեխաները տանը ժաման ժամգոտ լալիս ելին. մայրը գնացել եր...

— Ի՞նչի վոր, ապի, — զարմացած հարցրին  
յերեխաներն ու նայեցին հորը:

Շուրջը բոլորած՝ նրանք մերթ նկարներին  
ելին նայում, մերթ Ալեքսանի շարժվող ծնոտնե-  
րին: Կինն ել նրանց հետ, մի յերեխի պես, հե-  
տաքրքրությամբ լսում եր: Ալեքսանը պատմում  
եր համքերից:

Դեռ հանգստանում եր: Սրհ եր, տաք եր.  
դուրս յեկավ. պտտում եր իրենց բակը:

Այնպես տխուր եր ու աղքատիկ, այնպես  
ցածրիկ եր խրձիթը. քայլում եր և մտածում՝  
ծնոտներն իրար հպած: Յերեխաները կախվում  
ելին նրա ձեռքերից:

Ալեքսանի սիրաը ցավում եր, նայում եր  
ըշապատին ու ասում.

— Հետո ի՞նչ պիտի անենք, յերեխնք ջան:  
Յերեխաները պելիվում ելին հոր յերեսին ու  
պայծառ աշխիները մտախոհ թարթում:

Հարեւանները հավաքվեցին Ալեքսանի մոտ  
և յերկար խորհրդակցեցին իրենց վիճակի շուրջը:

Նրանք, չորս հարեւանները հետեւում ելին  
նրա խոշոր դեմքի շարժումներին, հետեւում ելին  
խոշոր ծնոտներին:

— Բա ի՞նչ պետք ա անենք, Ալեքսան:

— Ես տարվա սերմացու չունենք:

— Դու ի՞նչ պետք ա անես:

— Մի բան կանենք, հեշտ ա... պատասխա-  
նեց Ալեքսանն ու հանկարծ հիշեց. — Եկեք մի  
եսենց իրար հետ գնանք գեղը ման գանք. տես-  
նեմ ի՞նչ թագա բաներ կան...

— Գնանք, Ալեքսան, ըտենից ա, տեսնենք...  
ասացին հարեւաններն ու միասին գնացին:

Յերեխանները միքանի վայրկան մնացին  
կանգնած, հոր յետեկից նայելով:

4.

Հինգը քայլում ելին մի շարքով:  
Հողագույն գեղքերի ակոսներում մի ընդ-  
հանուր միտք եր ծլել. հինգը քայլում ելին կողք-  
կողքի: Չորսը ձեռքերը ծոցները դրած, իսկ մեջ-  
մեջի մարդը ձեռքերն ազատ գցում եր: Նա զլշ-  
խաբաց եր. կապույտ բլուզի վրա, կրծքին  
«Մոպը»-ի կարմիր նշանը փայլում եր:

Չորսը շփում ելին մորուքները, չորսը փա-  
փախներ ունեցին. մեջտեղի մարդը մորուք չեր  
թողել ու ճակատը բաց եր:

Յերե խոսքը թեժանում եր, ձեռքերը հա-  
նում ելին ծոցներից, փափախները քսվում ելին  
իրար. նրանց հսամաշ տրեխները քիթ-քիթի արո-  
րում ելին:

Զրաղացի քարերի պես ամուր ծնոտները  
շարժելով՝ խոսում եր Ալեքսանն ու նայում չոր-  
սի յերեսին:

Նրանց վոտնաձախից փողոցում քուջուջ ա-  
նող հավերն որորվելով՝ փախչում ելին սլատե-  
րի տակ:

Գյուղացիները բարձրաձախ վիճելով, գյուղ-  
խորհրդի գրասենյակից ելին գալիս կամ դեռ նոր  
ելին գնում այնտեղ:

Հանդիպած գյուղացին բարեւում եր Ալեքսա-  
նին, ապա մի փոքր յերկար նայում նրա վրա...

Գյուղի կուսպջիջի քարտուղարը, Բարսեղը  
դեռ հեռվից նկատեց Ալեքսանին ու ժպտալով,  
վազեվազ հասավ նրան, ամուր սեղմեց ձեռքը:

Մանկության ընկերներ ելին յեղել, հին բա-  
րեկամներ ելին. կարոտալի աչքերով իրար նա-  
յեցին:

Նրանք առանձնացան. միքանի ըովե կամա-  
ցուկ խոսում ելին. չորս գյուղացիները վսաքերը  
քսաքստացնելով անհանդիստ սպասում ելին:

— Եսոր իրիկունը ժողով ունենք, կդաս, —  
ասաց Բարսեղը:

— Իրիկունը կդամ, շատ կխոսենք... — ու յեր-  
կու հին ընկերներն ուրախ բաժանվեցին:

Տերտերի տղան, կազ Պապուշը, վորին գյու-  
ղացիները վորպես ուսումնականի վարժապետ  
ելին ասում, փողոցում կանգնած՝ մի գյուղացու  
հետ խոսում եր:

Հինգը, յերբ մոտեցան նրանց, նա յետ-յետ  
քաշվեց, բարեկաց Ալեքսանին.

— Պաժանական կամ առաջնական առաջնական մասը տամ ձեզ:  
Ալեքսանը չժպտաց, և ծնոտները չշարժվե-  
ցին, միայն գլխով պատասխանեց բարեկին, ու  
հինգն անցան:

Պապուշը քթի տակ յերգելով, ձեռքերը մեջ-  
քին զրած, մինչև վերջ աչքը չհեռացրեց հազի  
շարքից:

Նա կողքի գյուղացուն հարցրեց, թե ուր և  
ինչի ելին գնում նրանք. գյուղացին թափահարում  
եր ուսերը.

— Բալքի գործ ունեն...

Պապուշը կաղալով և ուսերեն ինչ-վոր յերգ  
ձայնելով, գնաց դեպի Պետրելի տունը:

5.

Հինգն իրար յետեկից ներս մտան:

Յերիտասարդ պաշտոնյան, վոր սեղանի ա-  
ռաջ նստած զըռում եր, զլուխը բարձրացրեց:

— Վարկավորող ընկերության նախագահը  
դժուք եք:

Հաստատաքաղ առաջ գնաց Ալեքսանը:

— Այս, յես եմ, — պատասխանեց պաշտո-  
նչան ժպտալով:

— Ընկեր, մեր խնդիրքը գե լսեցեք, — շա-  
րունակեց Ալեքսանը պողպատի ձայնով. — մեր  
տնտեսությունն առաջ տանելու համար միջոց-  
ներ չունենք, վարկ ենք ուղում. ես հինգս ենք,

իրար հետ համաձայնվել ենք, — իւս գարձավ,  
ցուց տվեց ընկերներին:

— Առաջ լեկեք, ի՞նչ եք քունջումը կանդ-  
նել, մեր գործն ա, խոսացեք, ելի, — ասաց Ալեք-  
սանը նեղացած տոնով:

— Հնկեք ջան, մենք ել եղ ենք ասում, ինչ  
վոր մեր հնկերացու Ալեքսանը, — ասացին մյուս-  
ներն ու կամաց-կամաց առաջ գնացին:

— Նստեցեք, զյուղացի ընկերներ, — քաղաքա-  
վարությամբ առաջարկեց վարկալին ընկերու-  
թյան նախագահը:

— Դու մեր գործն աշողակ արա, եսենց ել  
լավ ա, — ասաց կարճահասակ, մի աչքն ել հատ  
ընկած Մուքելը: Իսկ սեամորուս Ոհանը, բար-  
ձրահասակ Յեգորն ու բարակ Գարոն նստեցին:

— Ի՞նչ միջոցներ ունեք, — հարցրեց պաշ-  
տոնյան՝ զլանակը վառելով և աչքը չհեռացնելով  
Ալեքսանի կրծքի նշանից:

— Մենք կասենք, իրեն թող գյուղխորհրդի  
նախագահն ել հաստատի, քամի վոր մեզ լավ ա  
ճանաչում, — ասաց Ալեքսանը, շեշտակի նայեց  
զյուղխորհրդի նախագահի աչքերի մեջ ու հեն-  
վեց սեղանին:

Գյուղխորհրդի նախագահը մի կողմում, սե-  
ղանի առաջ նստած լսում եր զյուղացիներին,  
ուշուշ պատասխանում: Նայում եր հնգի կողմը,

զլուխը քորում. ականջը բոնած՝ լսում եր կող-  
քի զյուղացիներին, նույն ասածը նորից հարցը-  
նում և աչքերը սրած անվերջ նայում եր Ալեք-  
սանին:

— Ես Մուքելը մի հատ յեղ ունի, են թուխ  
մորուքովը, — Ալեքսանը ցուց տվալ Ոհանին, —  
մի հատիկ եծ ունի ու մի բոլուկ ել երեխեք:  
Յեգորն ու Գարոն մի-մի յեղ ունեն, միքանի վոչ-  
խար ու ելի շատ երեխեք:

Նրանք հոնքերն անընդհատ շարժում ելին,  
տրեխները քսում գետնին: Մուքելը բթամտերը  
պատուն եր:

Ոհանը չսպասեց, վոր Ալեքսանն իր մասին  
ասեր. ինքը կմնդնեց և դեռ չսկսած՝ հուզվել եր.

— Ամենահնմիջոցը վոր կա, ինքն Ալեք-  
սանն ա. Ես մարդն երկու տարի Ալլահվերդի  
հանքերումը բանեց. ընկուր թողեց, վոր վոտ-  
ներին ցավ ա պատահել, կարում չի ել բանի.  
մին ել ընտանիքի պատճառով եկավ գեղը: Հի-  
միկ համաձայնվել ենք, վոր իրար հետ ֆողի  
գործ անենք:

Վարկալին ընկերության նախագահն ուշա-  
դրությամբ նայում եր Ալեքսանին, վորը հիշո-  
ղություններով տարված՝ զլուխը կախել եր սե-  
ղանի վրա: Գյուղխորհրդի նախագահը վոտից  
զլուխ չափում եր Ալեքսանին:

Ալեքսանը գրագիտ եր, կարգայ.

✓ «Յերկարասակ վարկ (վեց տարի ժամանակով), սերմ, գութան՝ կողեկտիվ անտեսության համար...»

Ու ստորագրեց:

Հողագույն դեմքերը պարծառացան. Մուքելը կոկորդը մաքրում եր:

Յերբ վոտքերը դուրս դրին շեմքից, գարնան արել զիպատ նրանց ճակատին, գարնանաշշունչ քամին շոյեց նրանց խճճված մորուքները: Իսկ Ալեքսանը խաղաղ եր, ծնուներն՝ անշարժ:

6.

Ուշ յերեկոյան Ալեքսանը վերադարձավ ժողովից. յերեխաները ձագուկների պես իրար կողքի կծկված՝ քնել ելին. կինն արթուն նրան եր սպասում:

— Հլա նոր ես եկել, դինջանում չես, եղքան ման ես գալիս, ժողովներ ես զնում, յետով ասում ես՝ վոտներս ցավում են.—յերբ Ալեքսանը ներս մտավ, մեղմ հանդիմանեց կինը ու տաքթելը դրեց նրա առաջ: Ալեքսանը ժայտաց.

— Քանի գործ կա, մարդին դինջություն չկա, —ու նստեց սեղանի առաջ:

Նա լուս եր. թելի բաժակը մոտեցնում եր շուրթերին ու ցած գնում: Նոր տպավորություններն աղմկում ելին Ալեքսանի ուղեղում:

Փոքը եր զյուղի բջիջի ժողովը, անաղմուկ ելին խոսել: Իսկ անտեղ, հանքերում յերբ ժողով եր լինում—ահուելի հսկալի նման բազմությունն ասես մոնչում եր, վոնց վոր հրեղեն շուրթեր լինելին, ենպես ելին խոսում ու ենպես ելին նախագահին...

Իսկ այստեղ, աղոտ ժողովում, խոսում ելին յերկար ու ծանր:

Կինը մտազբաղ նայում եր Ալեքսանին. նա դեռ մի բաժակ թելը չեր խմել...

7.

Յերեխաները հայրերից առաջ ելին անցել, գնում ելին սերմացուն ստանալու

Ալեքսանը քալլում եր ծանր ու մտազբաղ, Ոհանն ու Գարոն յերեխաների հետ առաջից ելին գնում, իսկ Մուքելն ու Յեգորը յետ ու առաջ ելին մնում: Մուքելը կողք-կողքի նայում եր Ալեքսանին ու շուտով հայցքը փախցնում:

Մի պառակ կին աչքերը սրբելով արագ գնում եր. նրա փոքրիկ թոռը տատին եր նայում ու թսկթնկալով նրա հետ վազում:

— Մարդիս գլուխը ջարդեցին ու փողս ել զավթում են, գնում եմ նախագի կուշար:

Թոռը ձգում եր փեշից.

— Արի, տատի...

Ալեքսանը քալլերն արագացրեց ու գնաց

Նրանց յետելից: Մուքելը, Յեղորը նախում ելին  
քամակից:

— Ամեն զործի մեջ խառնվում ա, ասա ինչ  
ցավդ ա կարել. հմիկ մեր զործը թողեց...—  
ասաց Մուքելը. Յեղորը գուխը տօքացրեց:

Նախագահին շրջապատել ելին գյուղացիներն  
ու բոլորը գժկամ արտահայտություն ունեցին:  
Նախագահը ժպառում եր.

— Աղա, յուլա տարեք, Ելի. տեսնո՞ւմ չեք՝  
յես ել իսկի շունչ չեմ կարում քաշեմ...

Նախագահի միտքն ուրիշ բանով եր զբաղ-  
ված, կարծես չեր լսում նրանց:

— Ախր նախագահ ջան, ախպեր ջան, մեզ  
լսում չես...

Նախագահը հեղնանքով պատասխանեց.

— Պա, զսում չեմ. ասա ձեզանից ել քիչ  
բան եմ հասկանում, բա ինչի՞ ընտրեցիք:

Գյուղացիները նայեցին իրար յերեսի:

— Պապուշն իմ հողիցն իրա հողի մեջ ա  
ցել, երեխիս ել են որը տերտերը ծեծել եր,—  
խոսեց մի գյուղացի:

— Ով բերանը բաց ա անում՝ Պապուշ, Պա-  
պուշ. ախր նա եղքան ել մնասակար մարդ չի: Հմիկ  
նեպ ա, հասկանում չեք դուք, բելիններդ մտնում  
չի, ուսումնական մարդ ա, թող դինջ ապրի...

— Յես ասում եմ չե, դու սխալ ես,—ա-  
սում եր գյուղացին:

— Յես ել ասում եմ չե, դու յս սխալ.—  
պնդում եր նախագահը:

Ներս մտավ պառավ կինն ու աղաղակելով  
հրեց գյուղացիներին, մոտեցավ նախագահին.

— Նախագահ ջան, ես մի հետն ել ական-  
չիդ քամակը չցես, փողս զավթեցին, ես մի յե-  
թիմին վինց պահենք,—ցույց տվեց թռոանը, վոր  
թնկթնկալով կախվել եր տատի փեշերից.—Մար-  
դիս գլուխը ջարդեցին, հրեն տեղաշոր ա ընկել:

— Թամամ մեղք ա, նախագահ,—բացական-  
չեցին գյուղացիները:

— Այ պառավ, շատ կռվարար ես, մարդի  
զահլա յես տա...—խոսքը կիսատ մնաց. կապույտ  
բլուղով մարդը կանգնեղ շեմքին, հոնքերը խո-  
ժուած,

Բոլորի հայացքը դարձավ դեպի շեմքը. նա-  
խագահը գլուխը քորեց.

— Այ պառավ, գե լավ, Ելի, կգանք, կվեր-  
ջացնենք, մեր գլուխը մերը չի, գործի մեջ խեղդ-  
վել ենք,

— Մեր գործերն ել, մեր գործերն ել  
ձայն տվին գյուղացիները:

— Ընկեր Աղեքսան, տեսնո՞ւմ ես՝ վոնց են  
շշկացնում, մի գեղ ա—մի նախագահ...—ասաց  
նախագահը խորամանկ ու շոյոդ ժպիտով:

— Ալեքսան ջան, արի, արի,—կանչեցին  
գյուղացիները՝ նրա կողմը նայելով:

Ալեքսանն առանց ժպտալու մոտեցավ նրանց:

— Նախագահ, եդ պառավ կնիկն եսքան  
վախտ կանգնած ա, մի պատասխան տուր. բաենց-  
ների գործը պետք ա շատ թեզ վերջացնեք...

Բառերը հնչում եցին պողպատի պես:

— Դե պատի ասենք, վոր ես գեղի սախտ-  
գահը յես եմ, յես ել իմ գործը զիտեմ,—պա-  
տասխանեց նախագահը:

— Հենց են ա, վոր երեսում չի, հե, թե  
գիտես, ընդուր վոր ես կնիկն եսքան գնում ու  
գալիս ա...—վրա բերեց Ալեքսանն ու շարժվեց  
դեպի շեմքը:

Գյուղացիները գնացին Ալեքսանի յետևից.  
գյուղխորհրդի նախագահը կարմրեց, դեղնեց ու  
խեթ նայեց յետևներից: Իսկ պառավ կինն աշ-  
քերը սրբելով՝ իր թոռան հետ գնաց:

---

Սերմացուն տանում եցին. յերեխաները հա-  
րախըցով վազում եցին քամակից: Փողոցն առան-  
ձին կենդանություն եր ստացել. վոնց վոր հար-  
սանքափրներ լինեցին, այնքան ուրախ եցին սեր-  
մացու տանողները: Յերբ սերմացուն խրճիթնե-  
րի առաջ ցած դրին, կանայք գուրս յեկան ու սի-  
րտիր ժպտացին իրար յերեսի:

Ալեքսանը յուռ նայում էր.  
Կաղ Պապուշը մոտեցավ նրան.

— Մի գեղացի յենք ու երկու տարի յա,  
վոր իրար չենք տեսել. թամուղ պրոլետար ես  
դառել, մեղ հետ ել չես խոսում: Արիք, արիք,  
մի ես ձեր թաղա ընկերութենն ըսենց կամպա-  
նով տանեմ, մի-մի թաս արադ խմացնեմ:

— Յես շնորհակալ եմ, գործ ունեմ, — հրա-  
ժարվեց Ալեքսանը:

— Ալեքսան, մարդի ինսդիրքն ինչի յես կոտ-  
րում, — ասեց Մուքելը հանդիմանական տոնով:

— Պատիվը վ՞րին ա, են ա տեսանք իրար, ելի:  
Կաղ Պապուշը նեղացածի պես հեռացավ:  
«Ե՛ս ինչ թափուր մարդ ա մեր Ալեքսանը,

վոչ պատիվ առնել զիտի, վոչ պատիվ տալ»,  
մտածում եր Մուքելը՝ աշքի մեկը փակած:

Իսկ Ոհանը գոհունակությամբ շփում եր մո-  
րուքը, հասկանում եր Ալեքսանին և չեր դժո-  
հում:

Ալեքսանի մեծ աղջիկը՝ Նոյեմը սերմացու-  
ների մոտ կանգնած՝ մտածում եր ու ափսոսում,  
վոր Սերոն այստեղ չեր, վոր նա յել ուրախանար:

8.

Կ անաչ բլրին փոված՝ վոչխարները ծուլ-  
ծուլ վորոճում եցին: Նըանցից մի փոքր բարձր,  
բլրի կատարին թիկնած՝ պատանի հոտաղն ել իր

համար զիր եր վորոճում: Մե աչքերի վրա հոն-  
քերը գիղած՝ սուբ հայացքը սևեռել եր խոշոր  
գրեթին:

Են որը, յերբ կարմիր գրոշակը գյուղը  
մտավ, Սերոյի արյունը յեռ եկավ. նոր հոսանքի  
հետ գնաց նա ու կոմսոմոլ դարձավ:

Սերոն են հովվական համբերությունն ել  
չուներ. նրա մտքին հովվական սահմաններն այժմ  
նեղ ելին գալիս. այդ կանաչ բլուրներն այժմ  
նեղ ելին թվում, վոչխարների անմիտ վորոճը  
զայրացնում եր նրան:

Ի՞նչ անենք, վոր հոսաղ եր ու զիշերցերեկ  
վոչխարի յեռելից եր ման գալիս. այդ տամավեց  
տարեկան պատանին անքան յեռանդ ուներ, վոր  
զիր չե, յեռ քար ել կմարսեր:

Սերոն հաճախ առանձնանում եր ու կար-  
դում. մյուս հոտաղները Սերոյից քաշվում ելին  
ու գիտուն չորան կանչում:

— Կոմ-սո-մոր, դա-սա-կարգ, պրո-լե-տա-րի-  
ատ...—բառերը հնչում ելին շեշտով, բառերը  
ուժգնորեն զնդում ելին անվարժ հոսաղի բե-  
րանից:

Մերթ-մերթ վոչխարները դնչիկները դարձը-  
նում ելին դեպի Սերոն, ապշած նայում, վորո-  
ճում...

Սերոն զիրքը դրեց զլիսի տակ ու մեջքի

վրա սկառկելով՝ սկսեց սուլել: Մաքերը բազմա-  
շար հոտի պես անցնում ելին ուղեղով, վորոնց  
հաշիվը պատանի հոտաղը չեր կարողանում պա-  
հել: Թե՛մե հողմի պես ժամանակ սահում եր զեմ-  
քից, և ինչքան հույսեր ուներ նա:

«Հմի ել չորան չեմ լինի. մինչեւ յերբ միամ  
եսպես խամ», մտածում եր Սերոն՝ հայացքը հե-  
ռու հորիզոններին հառած:

Կես քնի մեջ, կես արթուն, նրան թվաց,  
թե վոչխարների հոտը ժողովն եր, ծանոթ դեմ-  
քեր ելին,—բջիջի կոմսոմոլները նստառել ելին  
ու անընդհատ բերանները շարժում ելին:

Սերոն շուռ յեկավ կողքի վրա ու գոչեց.

— Ընկերախնք, ինձ ել ձեն տվեք,—բայց  
«ընկերներն» ապուշապուշ բերանները շար-  
ժում ելին:

Սերոն զայրացավ, վեր թռավ տեղից. հո-  
տաղ Ասոն գուգուկը ձեռքին վազում եր դեպի  
Սերոն, նրա ականջի տակ սկսեց նվազել: Սերոն  
աչքերը արորում եր:

— Սերո ջան, Սերո, գիտուն ջան, ուրա-  
խացի, թոչկոտում եր Ասոն՝ թեր Սերոյի թի-  
կունքով գցած, իսկ վոչխարները դանդաղ դած  
ելին իջնում:

Կանաչ բլուրներն ու անտառները բուռն  
զգացմունքներ ելին սնուցել Ասոյի կրծքում: Նա

ընկերասեր եր, Սերովին շատ եր սիրում. թե  
վոր նրան մի վտանգ սպասնար, Ասոն գլուխը  
կտար: Յերգի սիրահար եր Ասոն, դուդուկը  
փչում եր ու կանաչներում ննջում:

— Արևա վկա, Սերոն, իմ ախաղեր հնկերն ես  
դու. մի սհաթ վոր քեզ ես չոլումը չեմ տես-  
նում, սիրաս մի թափուրա ըլում:

Մեզմ նվազում եր, Նրանք ցած ելին իջ-  
նում: Ասոն գուգուկը սրբեց ու զբեց թեկի տակ:

— Սերոն, գիտես եղ տերտերն ու իրա տղեն,  
եղ Պետրեն ու իրա կնիկը՝ ուզում են հախս  
կտրեն: Են որը, վոր հախս ուզեցի, տերտերը  
աչքերը խոլորաեց վրես, Պետրեն ել քիթումոթով  
ջուղաբ տվեց:

— Ասն ջան, դու քու հախի տերն ես, հիմի  
մեր իշխանությունն ա, հո նրանցը չի...

— Յես ել եղ եմ ասում, հիմի մեր իշխա-  
նությունն ա, հո իրանցը չի, — կրկնեց Ասոն,  
ապա նայում եր Սերովի գեմքին, և հավատում,  
և ժպտում...

Նրանք սուլելով հետևում ելին համրաքայ  
վոչխարներին:

9.

Մուքելն ուրախ գոմը մտավ, շփեց յեղան  
մեջքը, նայեց չորս կողմը, գլուխը պտտեց, նա-  
յեց յեղան խոշոր աչքերին ու հառաչեց:

— Խեղճ հայվան, վոնց վոր լիզու առած,  
հետս խոսելիս ըլի, առանց թալի անասունը բորշ-  
կել ա...—ապա ուրախացած կռացավ դեպի յեզը.

— Յեզը ջան, ես ա հա, մտիկ տանք...—քարը  
դեմ տվեց գոմի դուանն ու շտապ խրձիթ գնաց:

Սերոն հոր գեմքին ուրախության ծալքեր  
տեսավ ու ավելի համարձակություն առավ.

— Ապի, մինչև լեռը պտի ուրիշների հա-  
մար չոբանություն անեմ, հիմիկ իմ սիրաը վոչ-  
խարների հետ հաշտվում չի...

Մուքելը նայեց աղավին և պատասխանեց.

— Հիմի ընկերովի գործ ենք անում. մինչև  
հունձը հա սպասենք...

Սերովի բիբերը յանացան, և նա ուրախ բա-  
ցականչեց.

— Ընկերովի վարուցանքս, ընկերովի ապ-  
րուստ, ապի...

Մուքելը զիխով արեց. Մուքելի կինը մերթ  
տղավին եր նայում, մերթ հորը:

— Մտիկ տուր, — կրկնեց Սերոն և սկսեց  
սուլել:

Քիչ հետո դուրս յեկավ Սերոն. անցնում  
եր Ալեքսանի խրձիթի կողքով, քայլերը դանդա-  
ղեցրեց:

Ներսից լսվում ելին բարձր ծիծաղի հնչուն-  
ներ: Ալեքսանն ընտանիքում մեղմ և ուրախ

Եր: Խաղում եր յերեխաների հետ. յերեխաների ուրախությունն անսահման եր. նրանք թագըն-վում ելին, դուրս ելին թոշում, հորը բանում. մայրը ժապառմ եր, իսկ նոյեմը բարձր ծիծառում:

Սերոն լսում եր նոյեմի զնդուն ծիծառի ու սիլտը արսփում եր:

«Իմ ապին նոյեմի հոր հետ բարեկամ ա, գործ են բռնել հիմի մենք...»:

Նոյեմը դուրս յեկավ ինչ-վոր բան վերցնելու, մեղմ սուլոցը դիմակ ականջին և մատների ժայրերի վրա թեքվեց սուլոցի կողմը:

— Սերոն:

— Նոյեմ:

Բարախումն սրտերով հանդիպեցին իրար:

— Հիմի մեր ապիները...—ասաց Սերոն:

—...Կոլեկտիվ են, —վրա բերեց նոյեմը:

Պատի տակ հաստած կողք-կողքի, յերկար ժամանակ շնչում ելին: Խրճիթից լավում եր յերեխաների ուրախ աղմուկը:

Ոհանը պատում եր իր տնակի առաջ. ճակատի կնճիռները բացվել ելին:

— Ալեքսանի պես մարդի հետ գործ բռնելը՝ իսկի ծուռը չի գնա: Ալեքսանը սարի պես մեղ հետ ա, ախր դե ես սաղ իշխանությունն ել մեր քամակին ա, —շնչում եր ինքն իրեն, կինը դադա-

գողի նայում եր նրա գեմքի շարժումներին. դուռը բացում եր, ծածկում, դուրս եր զալիս շեմքը, ուզում եր նրա հետ խոսել... իսկ Ոհանը վոչինչ չեր լսում. նոր մաքերը չարխի պես պտույտ ելին զալիս զլխում:

Յեղորի, Գարողի խրճիթներում՝ անսովոր անդորրություն եր տիրում: Հալըերը, վոր հաճախ սրտի նեղությունից ծեծում ելին յերեխաներին, այդ որը ժապաղեմ սեղան նստեցին, յերեխաների հետ բանջարով սպաս կերան և հուկսերով մտան անկողին:

10.

Լիք հասկերը խոնարհվել ելին, հինգ վոսկե-գույն արտերը ծովի պես ծփում ելին:

Ամառալին իրիկնահովն եր. չորս հողադեմ գյուղացիներն ու նրանց մեջտեղ Ալեքսանը պազել ելին արտերի դիմաց:

Հովն որորում եր հասուն հասկերն ու ցոր-նահուրը ոդում տարածում. գյուղացիները լիա-թոք շնչում ելին ցորնահու ողլու:

Մուքելը հատ ընկած աչքը խփած՝ նայում եր արտերի յերեսին. նրա հայացքն անհանդիստ եր, կարծես լան բացած մի աչքով ուզում եր կուլ տալ հինգ հասուն արտերը:

Զրադացի քարերի պես Ալեքսանի ծնուռ-ները շարժվեցին, ու նա բացականչեց.

— Բնկերախնք, մեր երեխանց հայը հասավ.  
մեր կողեւկալիմ ապրեց, գիտեք, թե ինչու:  
Եսենց քոմակով առաջ կերթանք ու լավ կապ-  
րենք...

— Եղաքեսա, Ալեքսան ջան, քու ասածն ա.—  
պատասխանեց Ոհանը:

Յեզորն ու Գարոն գլուխները տմբացրին  
գոհունակությամբ:

Մուքելը քթի տակ շնչաց.

— Հյա մեկ մտիկ տանք, թե ուր կհամնենք.  
բարի հենց ըստի յել վոտն ենք ըլում:

Ալեքսանը նայեց Մուքելին, առանց խոսե-  
լու. Մուքելը հայացքը մի կողմ շուռ տվեց:

Ոդը հաճելի էր, քամին՝ ընաբեր: Յեզորը  
գլուխը հակաձ՝ ննջում եր, մյուսներն ել իրենց  
մտքերով ելին տարգած. հասուն հասկերի պես  
գլուխները կախեցին հողի վրա:

Ալեքսանի ականջին խուլ հարվածներ կպահ.  
հիշեց հանքերը:

Գյուղից նոր եր գնացել, ջուտա բազուկ-  
ներով հանքը փորում եր: Իրեն հետ, յերկաթի  
պես ամուր կամքով ընկերներ ուներ, ընկերներ  
կապույտ բլուզներով, հանքերի հետ կովի բռնը-  
գող: Ինչքան հավատ ունելին գեափ նոր աշ-  
խարհը, ինչքան անձնվեր ելին մեկ-մեկի համար:

Ենտեղ, մի աղմկոտ ժողովում Ալեքսանի  
դիմումը քննեցին. ընկերները խոսեցին, ընկեր-

սերը համաձայն ելին. Ալեքսանն անցավ կուսա-  
կցության շարքերը:

Գյուղն ուրիշ աշխարհ եր, հանքերում ուրիշ  
աշխարհ եր. վարժվում ու կոփվում եր Ալեքսանը,  
յերբ պատահարի հանդիպեց—վոտներն սկսեցին  
ցավել, ու տանից նամակ ստացավ...

Ի՞նչպիսի վշառվ նա բաժանվեց ընկերներից,  
նրանցից հետո ինչքան մոալ եր իր խրճիթն ու  
եր անտեսությունը:

Դումբ, դըմբ...մի հուժկու հայացք նայում  
եր կողքից. այն ընկերն եր, վոր իր կողքին եր  
աշխատում, վոր հաճախ նայում ելին իրար ու  
վոգերգովում:

Հանկարծ Ալեքսանը թել խիեց հողին ու  
սթափվեց. քրտինքը սրբում եր ճակատից:

Կարծես մեկը բոթում եր, կարծես սիրու  
թոշում եր, նորից հանքերն եր ուզում, բայց  
վոտքերը ցավում ելին... Նա մոալվեց:

Մուքելի աչքի առաջից հինգ արտերը հինգ  
մեծ հոսի պես փախչուն ելին, հիշում եր հոր  
հարստությունը, նրա գոմը՝ վոչխարներով լիքը:

Ոհանն ու Գարոն են գլխից աղքատ մինչև  
ես գլուխ, բացի աղքատությունից ուրիշ բան չե-  
լին կարող հիշել. նրանց համար ցանկալի չեր  
անցյալը վերհիշել, այժմ հույսերը կապել ելին  
կոլեկտիվին:

Ոհաննը կարմիր բանակում մի տղա ուներ. կոլ-  
եկախիլս ու նա մի-մի հույսեր ելին:

Կոլեկախիլս յերեխաները վազում ելին դե-  
պի արտերը. վոսաբորիկ ու զիխաբաց ելին, յե-  
րեսներն արևից ալրված, հագներին՝ չթի մաշ-  
ված շորեր. Նրանք իրեսց ճիշերով սթափեցրին  
հալրերին:

— Ապի, ապի, — աղաղակերպ ընկան հայ-  
րերի գիրկը:

Ալեքսանի ամենափոքր տղան փախավ զոգից  
և թռչկոտելով՝ մի փունջ հասկեր քաղեց:

— Ապի, մենք ել, մենք ել ենք ուզում, —  
թռչկացին մյուս յերեխաները:

— Դուք ել քաղեցեք, բալիկներ. — վրա բե-  
րին հալրերը:

Յերեխաները թռչուների պես ֆռուալսվ  
կանգնեցին արտերի կողքին և դեղին հասկերից  
մի-մի փունջ կրծքներին սեղմած՝ թե-թեի դցելով  
վաղեցին տուն:

Նրանց յետեից հալրերը ժպտում ելին:  
Ճանապարհին ուրիշ յերեխաներ հարձակվե-  
ցին, վոր նրանց փնջերը փախցնեն. ով կարող  
եր մի շուղ անգամ փախցնել նրանցից. բոլորը  
միասին հաղթեցին:

Ալեքսանի կինը շեմքում նստած շոր եր կար-  
կասում. յերեխաները բղավեցին.

— Նանի, մեր արտի ցորենը ...

Մուքելի կինն ավելը վեր զցեց շեմքում.

— Աղա, եդ մեր արտերիցն ա:

— Հա, հա, աղի, — աղաղակում ելին յերե-  
խաներն ու թռչկոտում:

Հողմի պես թեթև, դուրս վազեց նոյեմը՝  
շեկ մազերի խուրձերը թիկունքին թափթիված.  
Նա իր ուրախությունը միացրեց մանուկների  
ուրախությանը. Սրա, նրա թեկից եր քաշում,  
վոր մի բան հարցնի, սակայն վոչ մեկը տեղում  
չեր կանգնում. Նոյեմը ծիծաղից թուլանում եր:

Հինգ հարեանուհիները, մոտեմոտ բոլորած,  
սիրով զրուցում ելին. խոսում ելին իրենց հաշ-  
ուուն արտերից, ուրախանում ելին ձմեռվա պա-  
շարի համար:

Այրի կատարը վորտեցից-վորտեղ գուլպան  
գործելով յեկավ նրանց կողքը. ճաղերը շարժում,  
սուս լսում եր և մեկ-մեկ աչքը հառում Պետրե-  
մանը, վորի բալկոնը նայում եր դեպի հինգ  
խրճիթները:

Պետրելի կինը՝ Սոփոն դուրս յեկավ բալ-  
կոնը. մատներին մատանիներ կալին ու զիխինը՝  
խաս եր. Նա կեղսոտ ջրերը շպրտեց դեպի  
խրճիթները, նայեց, նայեց ու քիթը սրբեց,  
շպրտեց նրանց կողմը:

Ալեքսանի կինն այդ բանը նկատեց, մեջքը

դարձրեց նրա կողմը. մյուսներն ել այդպես արին:

Կատարը մեկ նրանց եր նայում, մեկ Սովորին. Սովորն աչք-ունքով ուսում եր նրանց: Կատարը նյութ եր քաղում ու յեթե նրանց չհանդիպեր, վորքան ախուր ու անյութ պիտի անցներ այդ որը:

Յերեխաները նայում ելին Սովորին, թշերն ուսուցել ելին ու կանգնել: Մաքրերը բռնեցին յերեխաների ձեռքերն ու քաշվեցին լրճիթները:

Կատարը գուլպի ճաղերը շարժելով՝ զնում եր դեպի Սովորն, մին ել կաղ Պապուշը նրանից առաջ բարձրացավ բալկոնը. Կատարը ճամպեն փոխեց, թեքվեց ուրիշ կողմ:

Պապուշը հաճախ եր այցելում Սովորին. Գյուղն այդ մասին խոսում եր, վոր վարժապետ Պապուշը Սովորի սիրեկանն եւ:

Սովորի Պետրեն ծերացած մարդ եր, իսկ Պապուշը դեռ ջահել եր և ուսումնական. Սովորն թուքը կուլ եր տալիս նրա համար... Իսկ Պապուշը «Անուշիկ Սովոր» յեր ասում ու հաճախ նրա մոտ լինում:

Սովորն Պապուշին ներս հրավիրեց. դոները ծածկեցին:

11.

Գլուխը կախ, տերտերը ժամ եր շտապում: Ասոն վոչխարները քշում եր, յերբ տեսավ տեր-

տերին, հասի առաջն ընկալ ու տերտերի ճամպեն կարեց.

— Տերտեր, հախս տալիս չեք:

Տերտերը յետ-յետ քաշվեց ու չորս կողմը նայելով՝ պատասխանեց.

— Որհնյալ լինիս, զավակս, միքիչ ել սպասիր:

— Միքիչ-միքիչ չգիտեմ. դու յել, Պետրեն ել հախս տվեք, թե չե՛ հիմիկվա դատաստանն ուրիշ ա, հա:

Հոտը կանգնել եր փողոցի մեջտեղում:

Ասոն ձեռքերը դրել եր մեջքին ու դուդուկը լրել գոտու մեջ: Տերտերը սեղմել եր ատամներն ու քիչ եր մնում աչքերով Ասորին ուտեր:

— Յերես առած. անիծվես, ժամիցն ուշացա, — վնթինթաց տերտերն ու գնաց:

— Վոչ ավետարանիցը, վոչ ել ժամիցն եռ վախում, տերտեր... բղավում եր Ասոն:

Տերտերը ժամի առաջ մի փաթաթան թուղթ գտավ. դողողալով, առ աստված կանչելով՝ փաթեթը բարձրացրեց, կարծում եր՝ փող եր: Հանկարծ յերեսը ծամածուց, թքեց.

— Անեն տեղ մարդի առաջն են գալիս անորենները:

Մի հեղափոխականի պատկեր եր... ձեռքում ծալծլեց, ճմլտեց ու շպրտեց ժամի պատի տակ:

Մի յերեխա նկատեց ու վագելով յեկավ  
փախցրեց ծալծրած նկարը: Յերեխաները հա-  
վաքվեցին այդ մեկի զիսին ու նկարը բացում  
ելին, իրարից խլում: Տերտերն ահով ժամը  
մտավ:

Ասոն վոչխարի կեսը տերտերի զոմն արեց,  
կեսը քշեց Պետրելի տունը:

Դուրսը մարդ չեր յերեւմ. բարձրացավ  
բալկոնը, միքանի անգամ բղավեց. դուրս չեկան:  
Ստուգելու համար, թե տանը մարդ կար, թե  
վոչ, լուսամուտից նալում եր: Հանկարծ դուրս  
յեկավ Սոփոն՝ կարմրատակած, ձեռքը դողալով,  
ուզում եր խփել Ասոյի զիսին:

Ասոն բոռնցք ցուց տվավ:

— Դու ի՞նչ ունես, վոր իմ շուշիցը մտիկ  
ես տալիս, դառավնուկ ես:

— Ի՞նչ կըի, վոր մտիկ տանք. հախսավեք,  
հախս եմ ուզում...

Պապուշը չհամբերեց, դուրս յեկավ՝ ձեռքե-  
րը մեջքին դրած:

— Ե՞ս միքիչ աստարձնա, կնիկարմատի հետ  
կարգին վարվի, ձեզպեսները կուլտուրան փչաց-  
նում են, հասկանում ես:

— Աստարոժնի-մաստարոժնի յես զիտեմ  
վոչ, հախս տուր, պրծավ գնաց, թե չէ դատա-  
րանով կառնեմ:

— Ինչի՞ ոլխոի ձեղ եղբան լիզու ունենա-  
լիք, վոր...

— Լիզու յել ունեմ, իրավունք ել, — պատաս-  
խանեց Ասոն ու թփթփացնելով՝ սանդուղքներով  
իջավ:

## 12.

Մայրերը հացը կապեցին յերեխաների թի-  
կունքին ու ճամպեցին հայրերի մոտ:

Կոլեկտիվն իր արտերը հնձում եր. հասկե-  
րը հեալով փոփում ելին:

Ալեքսանը հագել եր իր հին բանվորական  
բլուզը. հայացքը համառ ու լարված՝ փոռմ եր  
հասկերը:

Յերեխաները մեծ յեռանգով ոգնում ելին  
հայրերին, խուրձեր ելին կազմում հնձված հաս-  
կերից, հաճախ նալում ելին Ալեքսանի դեմքին և  
նրա կարգադրությամբ շարժվում:

— Այ, բալեք ջան, ապրեք, ես ձեր հացն  
ա, մեծ ու պուճուր իրար քոմակ արած՝ հողից  
վոսկի յենք հնձում. — ասում եր Ոհանը:

Մոտիկ կալերից գյուղացիները հաճախ զա-  
լիս ելին կոլեկտիվի աշխատանքներին նայելու,  
կաղ Պապուշի կալը կոլեկտիվի արտերին շատ  
մոտ եր. Պապուշը ծղնոտի գլխարկ եր ծածկել,  
տերտերը հանել եր վարաջևն, աշխատում ելին:

Պապուշը հաճախ հայում եր գեղի հինգը.  
Երբ Ալեքսանի հայացքը հանդիպում եր նրա հա-  
յացքին, շրթունքները կրծում եր և ինչ-վոր քթի  
տակ շնչում:

Ալեքսանը հոգնած եր, նստեց հանգստանա-  
լու. Ոհանն ու Գարսն ել գերանդիները ցած դրին:

— Ալեքսան, քու վոսները ցավում են, զործ  
մի անիլ, ետենց զրադ նոտի, ելի, — ասաց Ո-  
հանը:

— Յես վոր չաշխատեմ, սիրոս կճաքի...

Պապուշը կաղալով յեկավ նրանց մոռ. ձեռ-  
քին «Խորհրդալին Հայաստան» եր բոնել, զեմքին  
բոնազբոսիկ մի ժպիտ եր խաղում:

— Վոտ պանիմայու, սոցիալիստական արտ  
եք ցանել, սոցիալիստական անտեսություն եք վա-  
րում, այ. — խփեց ձեռքի թերթին, ես գաղեթի  
պրազրեսով եք գնում և պետք ա գնաք: Մենք  
չենք ուզում, վոր ես չքափորությունը վերանա,  
պոնի հավասարություն լինի: Ենակես չի, ընկեր  
բարոչի, — գարձավ նա Ալեքսանին:

Ալեքսանը լուռ, հեգնորեն նայում եր նրան:  
— Հրամանք ես, աղա Պապուշ, ուզես-չու-  
զես ետենց կրի, — պատասխանեց Ոհանը:

Պապուշը շրթունքները լպստելով՝ պատաս-  
խան եր գնառում. կարձ վոտքին ուժով հենվե-  
լով՝ ավելացրեց.

— Յես ի՞նչ աղա, հիմի զուք եք աղաներ:  
Ալեքսանը ժպտաց. Յեգորը զլխով հանուա-  
տում եր թե մեկի, թե մյուսի ասածները:

— Եդ սերմը ձեզ փեշքաշ կանեն, չե...

— Հո տերտերի խեչնամբուր չի, — պատաս-  
խանեց Ալեքսանը ամուր ծնոտների արանքից:

— Յենտրի բոլցեիկ ես, հա, — ասաց Պապուշն  
ու կաղալով հեռացավ:

Մուքելը դժգոհությամբ զեմքը կնճռոտեց. ✓  
«Ես Ալեքսանը շատ կոպիտ ա վարվում, Պապուշն  
իրա համար, խաթրով մարդ ա, համա սա երե-  
սին խեթ ա մտիկ տալիս, հետը լուս չի գնում»:

Ոհանը սիրում եր Ալեքսանի համառ հայաց-  
քը, նրա ամուր ծնոտների հանդեպ մի տեսակ  
պյատկառանք եր զգում և պաշտպանում եր նրա  
խելացի դատողությունները:

«Մարդ ըսենց պտի, Ալեքսանի պես դայիմ,  
վոր գնան, իմանան...», — մտածում եր նա:

Մինչեւ դաշտավին աշխատանքների վերջա-  
նալը ամեն իրիկնապահ հինգն իրենց յերեխա-  
ների հետ, հոգնած, վերադառնում ելին տուն:  
Կանացք աշխատավորների համար կերակուր ելին  
յեփում, հայ ելին փոռում, հալրերն իրենց յերե-  
խաների հետ ընթրում ելին, մի փոքր զրուցում  
և անկորպին մանում:

Ամեն իրիկնապահ նոյեմը սրտասրով սովո-

սում եր Սերովի վերադարձին. գլուխը հանում եր խրճիթից ու ժպտում հողնած Սերովին:

13.

Ալեքսանը նստել եր լուռ, ձեռքերը ծնուաների տակ հենած. յերեխաներն ընկել ելին ծընկներին ու նայում ելին հոր դեմքին: Նրանք սպասում ելին, վոր Ալեքսանը կատակեր իրենց հետ, բայց նրա դեմքով ժպիտ չեր սահում, և դեմքի մկանները չելին շարժվում:

Յերբ նա մենակ եր մնում, մաքերը պաշարում ելին նրան,—այդ ժամանակ նա թափծում եր:

Սովոր եր զնգան հանքերին, բազուկները սովոր ելին աշխատանքի, աշխատանքը լցնում եր նրա սիրտը, աշխատանքի ժամանակ նա յերբեք չեր տիրում:

Հիմի աշուն եր. դաշտալին աշխատանքները վերջացել ելին, ու ինչ պիտի աներ, մտածում եր նա, հանկարծ ցնցվում եր, վոտքերի վոսկը ները կարծես ճշում ելին ցալից, ցալը խփում եր ուղեղին. «Թե վոր վասներումս ցալ չըլեր, յես եսենց չելի նստի. վոնց վոր զոնադ ըլեմ, հնենց եմ նստել...»:

Աշուն եր. գուրսը—քամի: Բնության տիրությունը զուղում ափելի յե զբացվում, մանավանդ յերբ լուսամտախց նախում ես գուրս: Ալեքսանը հայում եր թափիսդ աներեներին:

— Ապի, — բացականչեց փոքրիկ տղան. — ինչի չես խոսում:

Ալեքսանն ուշը յեկավ, շուեց յերեխալի գլուխը, դեմքը պայծառացավ:

— Հապա մեր կոլեկտիվը, ես սկսած գործը. եստեղ ել շատ բան կա անելու, պետք ա վոր կոլեկտիվը ուժովայնենք:

Հիշեց գյուղխորհրդի նախագահի վարմունքները, այն պառավ կնոջ արցունքները: Հիշեց Բարսեղի խոսքերը, վոր իրար հետ շատ գործ կանեն, ու նորից վոգեորվեց.

— Եսենց ել լավ ա, եսենց կաշխատեմ, ես ժամանակի մարդն խակի տիրություն չպտի քաշի:

— Յեկէք, բալիկներ, թռեք ծնկներիս:

Յերեխաներն աշխուժացան, ուրախ ձիչերով բարձրացան հոր ծնկներին:

Մի փոքր խաղաց յերեխաների հետ, ապա պիսարկը դրեց, դուրս յեկավ.

— Գնամ Բարսեղի մոտ, տեսնեմ՝ բջիջն ինչ ա անում:

14.

Նոյեմբեր սաստիկ տիրել եր. յերկու յերեկո Սերովին չեր հանգիպել: Սերոն ուշ եր վերադարձում և առավոտը վաղ գնում:

Մայրն ինչ դործի վոր գնում եր, գյեկամու-

թիամբ եր կատարում ու յերեխաների հետ չեր  
ժպտում:

Իրիկնագեմին Նոյեմը բարձրացավ բլուրը,  
վորտեղ արածում ելին Սերոյի վոչխարները: Սե-  
րոն թիկնած՝ կարդում եր:

Նոյեմը ցածրում նստեց սպիտակ գառնուկի  
կողքին ու շոյում եր նրա խուճում բուրդը:

Ուրիշ հոտաղներ վոր Նոյեմին տեսան, սկսե-  
ցին յերգել, շվշագնել ու քարեր շպրտել:

— Զան աղջի, — բղավից նրանցից մեկը:  
— Մարդդ փախչի, — շարունակեց ուրիշը:

Հանկարծ Սերոն տեղից ցատկեց ու չորս  
կողմ նայելով՝ դեպի ցած վազեց. նկատեց Նո-  
յեմին, դեպի գառնուկը դնաց:

Նոյեմը կծկվել եր գառնուկի մոտ, զլուխը  
թաղցրել նրա վոսների արանքում. գառնուկն  
ել ծնոտը Նոյեմի ծնոտին կպցրած՝ դոհ վորո-  
ճում եր:

Սերոն բոնեց Նոյեմի ձեռքից ու տարավ իր  
մոտ, հացի մեշոկը Նոյեմի համար փռեց, իսկ  
ինքը նստեց խոտերի վրա:

Յերկումն ել լուռ ելին, մենակ հոտաղները  
դեռ շվշագնում ելին ու մերթ-մերթ, բարձր  
հայնոյու միրար:

— Նոյեմ, ինչի յես եսաեղ բարձրացել.

Նոյեմը զլուխը կախեց. Սերոլի ձախն ել դո-  
ղաց ու խոսքը վոխեց:

— Գիտե՞ս, Սերո, յես ել եմ ուզում կոմ-  
սոմոլ գառնալ. ապիս ասում ա՝ գնա, ինչի յես  
տանը նստել, վոր մայրիկը հիվանդ եր...

Նա խոսքը դեռ չեր վերջացրել, Սերոն ու-  
րախ բացականչեց.

— Ամեն անգամ քեզ իմաց կտամ, իրար  
հետ կպնանք ու ձմեռվա զիշերները վոր ժողովից  
դաս, դու մենակ չես ըլի ու չես վախենա:

Յերկումը սիրալիր ժպիտներով նայում ելին  
իրար:

Սերոն Նոյեմին այնքան մոտ եր զգում, վոր  
վոչինչ չեր թաղցնում նըսմից:

— Նոյիկ, վոր իմանա՞ ես սիրաս ենքան  
տիսուր ա... ես վոչխարները վոնց վոր ուսում  
ինձ:

Նոյեմն ուշադիր լսում եր:

— Անյեզու վոչխարները թմրի վրա քշի ու  
նստի, իսկ ուրիշներն ենքան բան են սովորում.  
վոնց վոր մի թափուր եմ դառել, վոչխարներն  
ինձ ուսում են:

Նոյեմը մտազբաղ աչքերը թարթում եր:

— Մի որ ել վոչխարները տիրոջ դուռը  
կըշեմ, յես ել քաղաք կզնամ:

— ԶԵ, Սերո, դու քաղաք մի գնտ, դու

մեզ հետ կաց, մեր կոլեկտիվը հաց ունի. դու  
մեզ հետ կտարես, թե չե՞ յե՛ռ ում հետ գնամ  
կոմսովով ու... ու քիչ եր մնում արտասվեր. մի  
տերե քաղեց, բոնեց աչքերի առաջ:

— Կոլեկտիվը, հա՛, դուզ ես առում, Նո-  
յեմ. — Սերոյի յերեսը պայծառացավ:

Եփ Ասոն եր, փչում եր դուդուկը. Նրա  
վոչխարները մոտիկ ձորումն ելին, ու ինքը նվա-  
գում եր: Այնքան քաղցր եր ու այնքան դուրե-  
կան Ասոյի նվազը: Զայնը հեռում եր, խուլ  
թրթիռները հասնում ելին Սերոյի ու Նոյեմի ա-  
կանջին:

Հոտաղների մեջ Ասոն հայտնի յեր իր դու-  
դուկի հունարով. հոտաղները հավաքվում ելին  
նրա շուրջն ու լսում: Նրանք իրենց հացից, կար-  
տոֆիլից Ասոյին բաժին ելին տալիս, միան թե  
Ասոն նվագեր:

Վոչխարները վորոճում ելին. Ասոյի նվագը  
քամու հետ սլում եր բլուրների վրա, Ասոյի  
նվագը հուզում եր հոտաղներին:

Նոյեմը լուռ թերթում եր Սերոյի գիրքը,  
իսկ Սերոն խաղում եր նրա մազերի խուրձերի  
հետ:

Մթնում եր. դեռ թրթում եր նվագը. վոչ-  
խարները ցած ելին շարժվում:

Ալեքսանը դադար չուներ, չեր կարողանում  
տանը նստել. պատում եր գյուղում, զբուցում  
եր գյուղացիների հետ. մամնակցում եր գյուղա-  
կան ժողովներին: Հաճախ գնում եր Բարսեղի  
մոտ, Բարսեղն ուրախությամբ հանդիպում եր  
Ալեքսանին ու յերկու ընկերներով գործում ելին:

— Ալեքսան, քու կոլեկտիվը մեծ գործ ա-  
տենանում, որինակ եք տալիս գյուղացիներին,—  
ասում եր Բարսեղը:

Ալեքսանը զլուխը կախում եր ու մտածում.  
Նա գոհ չեր իր կոլեկտիվով. կոլեկտիվը դեռ  
բարձրության վրա չեր կանգնած, և Ալեքսա-  
նըն եղան չեր ուղում:

Կենտգործկոմի անդամներից եր, յեկել եր  
գյուղ. գյուղացիները շրջապատել ելին նրան:

Հարցուփորձ եր անում, նրանք պատմում  
ելին գյուղի, գյուղաբնակի աշխատանքների մա-  
սին: Պատմեցին Ալեքսանի կոլեկտիվի մասին:  
Ալեքսանը նրանց հետ եր՝ լուռ, ծնոտներն իրար  
սեղմած:

Կենտգործկոմի անդամը մոտեցավ Ալեքսա-  
նին. Ալեքսանը բարեկց ու համառորեն նայեց  
նրա աչքերի մեջ:

— Կոլլեկտիվի անդամ եմ, այս:  
— Կարծեմ դու բանվոր ես յեղել, ընկեր Ալեքսան, — հարցրեց ալցելուն:

— Յես բանվոր եի, համա ի՞նչ անեմ, վոր մինչև վերջ չկարացի բանվոր մնալ, հիվանդությանս պատճառով թողի հանքերը, — պատասխանեց Ալեքսանն ու աչքերն ափսոսանքով թարթեց:

— Կարծեմ կուսակցության մեջ ես...  
— Եղալես ա, ենտեղ անցկացրին, հենց անդամ եմ:

«Ի՞նչպես համառ ու ինչպես գործսական ե այս մարդի նայվածքը, ինչպես ել յերեսում ե, վոր բանվոր ե. հենց սա յէ, վոր մեզ շատ պետք ե», — մտածում եր կենտգործկոմի անդամը, համակրանքով նայելով Ալեքսանին:

— Ընկեր Ալեքսան, դու հիմի յել շատ պետքական ես, քու սկսած գործը մի նոր հաղթանակ ե:

Ալեքսանը ժպտաց, Ալեքսանը վոգեորիկեց. Նա չեր սպասում, վոր այգքան մեծ ուշադրություն պիտի զրավի իրենց կոլլեկտիվը:

Ալեքսանը խոժոռված խոսում եր, պատմում եր գյուղխորհրդի նախագահի մասին, թե ինչպես ե հետևում գյուղացիների գործերին:

— Ընկեր Ալեքսան, դուք ճանաչում եք,

կուսակցության անդամ եք, բջիջ կա, դուք պիտի անխնաս ողաքարեք այս յերեսությների դեմ. այս տարվա վերընտրություններին նրան փոխեցեք:

Բավական յերկար խոսեցին. Նա տեղեկացավ կոլլեկտիվի կարիքների մասին ու խոստացավ համապատասխան աջակցություն ցուց տալ:

Յեկավ գյուղխորհրդի նախագահն ու բարեկեց կենտգործկոմի անդամին.

— Ես վհնց ա՝ երեսում չեք, համեցեք մեզ մոտ:

— Հը, գործերդ վհնց ա...

— Յոլա յենք տանում, — պատասխանեց նախագահն ու նայեց Ալեքսանին:

— Յոլայով բան չի դուքս գա, պետք ե կարգին լինի. հիմա մեր ինդիբները շատ են ու կարենոր, կուսակցության վորոշումները գյուղի մասին պետք ե լավ իմանաք: Գյուղխորհրդինախագահը մեծ զործ պիտի կատարի, նա հաշվեառու յե ամբողջ գյուղի առաջ:

— Յոլա վոր ասում եմ, այսինքն՝ գործերը կարգին տանում եմ:

— Համեստություն ես անում, — Ժպտաց կենագործկոմի անդամը:

— Ընկեր ջան, դե մեր մեջ վոր փիս, խալին մարդիկ չըլեն, մենք յոլավից յոլա կերթանք,

հրամ սոցիալիզմն ել տեղն ու տեղը կանենք: Համա հենց զիստան՝ դյուվխորհրդի նախագահը տառնը նստած՝ վլավ առառում: Ել զիտում չեն՝ գիշեր-ցերեկ զլուխս տրաբում ա, թե եսքան խալխին փոնց լուս տանեմ: Գյուղխորհրդի անդամներն ել ծանր ջաղացի քարի պես տանը նստում են, մինչև հավաքում եմ, որը մթնում ա...»

Նախագահը վորպես թե ճառից հոգնած՝ վլուխը կախեց:

— Հարգելի նախագահ, գու մի մոռանա վոր քո աշխատանքներն ամեն մի գյուղացի պիտի քննադատի, բացերն ասի. յեթե նախագահն իսկապես գործ չանող, վլավ ուտող ե, եղ նրանց իրավունքն ե՝ վոր փոխեն:

Նախագահի համար այդ պատասխանը ծանր եր ու ճնշող:

— Ուրեմնի ինձանից գանգատավոր են, ուրեմնի դուք ինձ գիպչում եք.— ասաց նա հուզված. գույնը թռել եր, ատելությամբ նայում եր Ալեքսանին:

Իսկ Ալեքսանն անվրդով կանգնել եր:

Գյուղխորհրդի նախագահի կողմից սովորական մի վերաբերմունք եր այդ, և նա չեր զարմանում:

Կենագործկոմի անդամը խստորեն ցւ մեղադրական հայացքով նայում եր նրան. նախագահը հեռացավ:

Կենագործկոմի անդամն Ալեքսանի հետ գնաց կողեկանի խրճիթները:

Մանուկիները կայտառ գեմքերով գիմավորեցին իրենց հյուրին. կանալք, աղամարդիկ հարգանքով բարեկեցին:

Խրճիթներում ինչ-վոր նոր շունչ, նոր կենցաղ եր նշանարվում, և ընդհանուր կապ կար բոլորի մեջ:

Մուքելը ծանրորեն և մի աչքը փակած, նայում եր հյուրին:

Հյուրը գոհ, լավ ապավորություններով գուրս յեկավ նրանց խրճիթներից: Մանուկիները փսփսուկով սեղմվել ելին իրար:

Գյուղխորհրդի նախագահն իրենց տանը նըստած՝ վլուխը ձեռքերի մեջ տուած, սրտի նեղությունից ճաքում եր:

Հիշում եր այն որը, յերբ Ալեքսանը գրասեհյակ մտավ, ապա նրա հայացքները, իր վերաբերմունքը գյուղացիների հետ և այն կրծող նախազգացումը:

Նա մերթ իրեն եր դատավարում, մերթ Ալեքսանին:

— Ինչ ա բանվոր ա ելել, դրան պաշտպանում են, ինքն ել շատ այերես առել. դրա հերն ել եղ թափուր մարդ ա ելել, ելի աղի պես ամեն

բանի խառնվող, ուրիշի զիսչող, — շնչում եր ու  
բարկությանից դուռ:

Կենազործկանի անդամը, բջիջի քարտուղարի  
հետ ել զրուցելուց հետո, հրաժեշտ տվակ գյու-  
ղացիներին:

Գյուղացիներն են տեսան, վոր նա սիրով  
ձեռք խփեց Ալեքսանին ու ավտոմոբիլ նստեց:

Գյուղացիների նախազանը լուսամուտից  
տեսավ այդ բոլորը. նայում եր սլացող ավտոմո-  
բիլի յետերից, սիրան անհանգիստ եր...

### 16.

Կոլեկտիվի իրեն հացն ուներ, մյուս գար-  
նան սերմացուն ել հորել եր. Զմեռ եր:

Խոսում ելին կոլեկտիվի մասին. խոսում  
ելին հարգանքով: Գյուղացիները բոլորվում ելին  
Ալեքսանի շուրջը, նրանից ելին խորհուրդներ  
հարցնում:

Ուրիշ յերեխաներ վախենում ելին կոլեկ-  
տիվի յերեխաներից. յեթե մեկի քթին կպչելին, մի  
ամբողջ բանակի պես մյուսները կհարձակվելին...

Կոլեկտիվի կանացք գեռ չելին կովել, իրար  
հետ հաշտ ելին ասլրում:

Սոփոլի չար լեզուն եր, վոր նրանց բամբա-  
սում եր՝ «կոլեկտիվ մարդու կնիկ» անվանելով.  
և եդ լուրերը պտացնում եր այրի կատարը, միա-  
միտ գեղջկուհիների ականջը դցում:

Կոլեկտիվի անդամներից մենակ Մուքելն եր  
շատ անհանգիստ. միշտ մի թագուն միաք տանջում  
եր նրան: Խուսափում եր ընկերներից, մի պատ-  
ճառ եր բոնում, թե՛ ճռներս ցավում են, ու մե-  
նակ նստում եր ոչախի կողքին:

Կաղ Պապուշն եր մեկ-մեկ նրան հյուր գա-  
լիս, հետը խոսում եր կեղծավորությամբ: Կոլեկ-  
տիվի մասին, Ալեքսանի մասին խոսք եր բացում...

Յերեկո յեր, ձմռան ցուրտ յերեկո: Սերոն  
ու Նոյեմը ժողով ելին գնացել, իսկ կոլեկտիվի  
մյուս անդամները հավաքվել ելին Ալեքսանի անա-  
կը: Ալեքսանը «Մաճկալ» եր կարդում, «Խոր-  
հըրդալին Հայաստան», մյուսները լսում ելին. յե-  
րեխաներն ել որվա խաղերից հոգնած՝ վեր ելին  
ընկել հայրերի կողքին ու թմրել...

Մուքելի սիրան անհաշտ եր. Մուքելը տանջ-  
վում եր: Նրա կինը այդ բանը նկատում եր և  
շրթունքները հապած՝ նայում Ալեքսանին:

Կարտոֆիլ ելին յեփել, բոլորը միասին պի-  
տի ընթրելին:

Մուքելը վերկացավ:  
— Բարի գիշեր, յես քեզ չունեմ, վոչ ել  
իշտահ. — գնաց:

Ալեքսանը խոժոռավելով միքանի վայրկան՝  
նայեց նրան և շարունակեց կարդալ:

Կարծես ձյունը Մուքելի վրա չեր իջնում.

Նույնիսկ մոռացել եր, թե ձմեռ ե, ցուրտը չեր  
զգում, Դանդաղելով մտավ իր տնակը և ազատ  
շունչ առավ, հառաչեց:

Մուքելի մտքերը պղտոր ջրերի պես վժժում  
ելին գլխում: Հիշում եր հոր հարստությունը,  
մարագում շարած կարասներով յուղը:

— Վոր միաս ա գալիս, գլխիս կրակ ա  
վառվում. հիմի ինչի տեր եմ. աչք պահի  
կողեկափին, ես Ալեքսանի ունքին մտիկ արա,  
վոր ասի՝ յա եսենց ժաժ եկեք, յա ենենց: Յես  
եսենց չգիտելի, վոր մեր թիքեքն ել մի տեղ  
պիտի ըլեն...

Շնչում եր նա, ապա հիշում իր միակ յե-  
ղին, նրա խոշոր աչքերի տխրությունը:

Նրան ասնչում եր այն միտքը, թե ինչպես  
մի հատիկ յեզը ջխտի: Հանկարծ նրա միտքը  
լուսավորվեց. Ժպտաց ու նորից գլուխը կախեց:  
Կինը ներս մտավ. Նեղացած եր ու Մուքե-  
լից դժո՞հ:

— Այ մարդ, եղ ինչ ես եղան միտք անում,  
նրանք ել են տեսնում:

— Ել ասիլ մի, կրակն եմ ընկել, ես ընկե-  
րության հետ սիրաս հաշավում չի. յես իմ սե-  
փականությունն եմ ուզում, յես իմ ջոկ ապրու-  
ալն եմ ուզում: Ալեքսանի, մեկեների հետ յո-  
ւա չեմ գնում: Իմ հաշիվս ուրիշ ա, յես հարը-

տություն տեսած մարդ եմ, ես խալիների տեղը  
խալիք ելին փռած վոտներիս տակին:

Կողջ համար անսպասելի յեր այդ բոլորը.  
շփոթված՝ մեջքի վրա յետ գնաց.

— Բա մեր կողեկափիը փիս ա, վոր ըտենց  
բաներ ես խոսում, եղ ով խելքիդ փշեց, ով ա  
թարսել: Մինչև հիմի սերմ չունելիր, մոլորել  
ելիր, հիմի ինչ ես ուզում...

— Քու բանը չի, քու հաշիվը չի, — զայրա-  
ցավ սրտնեղած Մուքելը, — ով ա իմ գլխի տերը.  
յես եմ ու եղքանի հետ չեմ ապրում, ջոկ եմ  
ապրում. շինքս պետք ա կտրեն, — շարունակեց  
նա՝ ոջախի կրակը խառնելով:

— Դե մենակ սլուզույի պես բվա, ախր մի-  
նը մեկելովն ա ապրում...

— Դու ինչ ես կնիկ աեղովդ պոզեր հանում  
վրես. ես ինչ ա գառել, տո. ինչ թափուր լիզու  
յա հանում:

— Հրեն, մի տես՝ Ալեքսանն իրա կնկա, յե-  
րեխանց հետ գնուց ա խաթրով խոսում, դու թթվել  
ես ու ոջախի կողքին բշկվել:

— Համբերությունս հատնում ա, հա...

Դուրսը քամի յեր, ձյուն: Սերոն ու Նոյե-  
մը վերադառնում ելին ժողովից. ցուրալ չելին  
զգում, — տինակես տաք եր, այնքան հաճելի յեր  
իրար կողքի ձյունի վրա քայլել:

Մեծ կոշիկները ձյունի մեջ թաղելով, յերկար շինելը հազին, մի կարմիր-բանակալին Ոհանի խրձիթին հասավ, դուռը թխկացրեց: Ոհանը դուրս յեկավ, կարմիր-բանակալինը ծոցից հանեց նամակը.

— Ես քու տղիցն ա, ասեց՝ ապնիս կտաս: Ոհանն ուրախությունից շփոթվեց, չեր կարողանում խոսել: Նամակաբերը շտապում եր, ձյունի մեջ կոշիկները խրելով գնաց:

Ոհանի կինն ել դուրս յեկավ, յերեխաներն ել դողալով, ձյունի վրայով վաղեցին Ոհանի յետից:

— Ալեքսան ջան, մի կարդա, տեսնենք՝ Սիմոնն ի՞նչ ա գրում, ներս մտնելով բացականչեց Ոհանը:

Ալեքսանը ծրարը պատոեց. տղան գրում եր.

«Ապի ջան, ժամանակ չի ըլում, վոր թեզթեզ նամակ գրեմ: Ինձ համար մեծ պարծանք ա, վոր կարմիր-բանակալին եմ. ենենց եմ սովորել, վոր ել իսկի ուզում չեմ գեղը դալ:

«Ապի ջան, յես ինձանից զարմացել եմ. ժողովումը վեր եմ կենում, առանց կապվելու ճառ եմ ասում, ել իսկի ասիլ չես, թե ես են Սիմոնըն ա:

«Մի ուրախություն ել, ապի ջան, կուսա-

կցության մեջ եմ անցկացել. մինչեփ անցկենալս սիրու մի տեսակ անդինջ եր, հիմի ավելի շատ եմ ուսում սովորում, ավելի շատ եմ կարգում. մեր կուսակցության դիսցիպլինն ենթավուր ա, վոր պետք ա աշխարքովն ինչ անց ա կենում, — կոիվ, խաղաղություն—իմանանք:

«Մին ուրախությունն ել են ա, վոր իմացա՝ դու կոլեկտիվ անտեսության մեջ ես. ընկերներիս առաջ պարծենում եմ, թե իմ ապին ել սոցիալիստականի համար ա կռվում... ապի ջան, ել ասելու չի, թե ինչքան ուրախ եմ: Գարունքն արձակուրդ կգամ:

«Բարեներ ազլնին, երեխանցը:

«Առաջին գունդ՝ կարմիր-բանակալին Սիմոն»:

Հնթերցման ընթացքում Ոհանի կուրծքը բարձրանում եր ուժգնորեն, Ոհանի բերերը լաւ նացել ելին. յերբ նամակը վերջացրեց, նա բացականչեց.

— Են ի՞նչ թափուր տղա յա դառել, վոր կուսակցություն են ընդունել. ել աշխարքի չափ ուրախ եմ:

— Մեր բանակն եղանակ ա. ինչքան խամաղերք կան, ենտեղ մարդ են դառնում ու պալիտիկա յեն հասկանում. Սիմոնը դրանցից ա, վրա բերեց Ալեքսանը:

— Ես որենքների հոգին մատաղ, իմ Սի-

մոնի հոգման մասագ,—աղտղակում եր Ոհանը՝  
յերեխի պես ուրախ։ Նամակը խնամքով ծալեց,  
ծոցը դրեց։ Ոհանի կինը նայում եր ապշած։ Նա  
չեր կարողանում հասկանալ այդչափ ուրախու-  
թյան պատճառը։

Ոհանը առւն գնալիս մտածում եր.

«Ոհան, հմի ավելի մուղափիթ պտի ըլես,  
հմի տղեգ կուսակցական ա, նրա անունը պատվով  
պտի պահես, չունքի կասեն՝ հերդ եսենց ա ու  
ենենց չի, չունքի դրել եր. հիմի մեր կոլլեկտի-  
վին ավելի պետք ա ուժ տանը... Ասում ա՛ ա-  
պի, սոցիալիզմ ես սկսել... Հանաք բան չի, ապին  
եղքամ ուրախացնում ա նրան, ապին ես թագա  
աշխարքի գործի մեջ ա»։

18.

Խորհուրդների վերընարության որերին կաղ  
զապուշը գնում, դալիս եր ես ու են գյուղացի-  
ների առնը, Մուքելի հետ հաճախ եր առանը-  
վում։

Սերոն այդ նկատել եր ու նախատել հորը.  
քանի անգամ ընդհարվել եր հոր հետ և քիչ եր  
մնացել՝ Պապուշին ծեծեր. մայրն աղերսել եր և  
Սերորի բարկությունն առել։

Ընտրությունների որը կաղ Պապուշը Մու-  
քելի անից դուրս յեկավ, Մուքելն ել ձանապարհ

եր զցում նրան. կամացուկ, փոխադարձ ժպիտ-  
ներով զրուցում ելին։

«Ախարեր, Պապուշն ուսումնական ա, լավ  
մարդ ա, իմ սրտի ուզած. Ալեքսանն ու մեկել-  
ները թշնամություն են անում», — մտածում եր  
Մուքելը։

Ալեքսանը նրանց կողքից անցնում եր,  
ծնոսները շարժեց։

— Հը, եղ ի՞նչ բան ա...»

Մուքելն առանց նայելու Ալեքսանի յերե-  
սին՝ պատասխանեց։

— Եղ իմ բանն ա...»

— Թող լինի, — պատասխանեց Ալեքսանը։

Սերոն ու Նոյեմը մտահոգված գնում-զա-  
լիս ելին, ձանապարհին հանդիպեցին Ալեքսանին։  
Ալեքսանի դեմքը խիստ եր, նա արագ անցավ։  
Գյուղացիները խմբված սպասում ելին. հենց  
վոր Ալեքսանը յերեաց, շշուկներ բարձրացան։

— Ալեքսանը.

— Հենց Ալեքսանին...»

Ալեքսանը բարեկեց նրանց, մոտեցավ քաղա-  
քից յեկած ընկերոջը, խոսեցին կամացուկ ու  
խորհրդագոր. գյուղացիները նրանց ելին նայում։  
Ալեքսանը նորից կանգնեց գյուղացիների մեջ։

Գյուղվարձրդի նախագահը տակւանց եր  
նայում Ալեքսանին. ինչ-վոր մի ձնշող նախա-

զգացում նրա դեմքին անհաճելի արտահայտում  
թյուն եր տվել:

Այն պառավ կինն ել եր լեկել ու հայացքը  
չեր հեռացնում Ալեքսանից:

Կաղ Պապուշը կանգնել եր անկյունում՝ Մու-  
քելի կողքին, կեղծորեն ժպառում եր գյուղացի-  
ների լերեսին:

Սերոն ներս մտավ, տեսավ հորը Պապուշի  
կողքին, շտապ մոտեցավ Ալեքսանին, ինչ-վոր  
բան շշնջաց և լերբեք հորը չնայեց:

Կոլեկտիվի կանալք ել ելին լեկել, կանգնել  
ելին իրար կողքի, մասնակցում ելին ընտրու-  
թյուններին: Նոյնմը նախորդք նրանց կամացուկ  
քացատրում եր:

Բոլորը լարված սպասում ելին վերընտրու-  
թյուններին. քաղաքից յեկած ընկերը ժողովը բա-  
ցեց: Գյուղապորհորդի նախագահը գլուխը կախ նըս-  
տել եր սեղանի տուած:

Գյուղացիներն անհանգիստ կանգնում, նըս-  
տում ելին, իրար հետ խորհրդակցում, մատ բար-  
ձրացնում: Ալեքսանը լուս լսում եր, գյուղապոր-  
հորդի նախագահը հագում եր և կարմրած ականջը  
քորում:

Ժողովը շարժուն եր, աղմկոտ: Գյուղացի-  
ներն իրար հերթ չելին տալիս. ակտիվ ելին,  
«Վո՞նց վո՞ր նման ա ենտեղին», — մտածում

եր Ալեքսանը, հիշում հանքերը. «Վո՞նց վո՞ր են-  
տեղի ժողովը»...ու դեմքին ժպիտ եր սահում:

Մուքելը խոռված տուն լեկավ. նա ձախն եր  
տվել կաղ Պապուշին, բայց Պապուշը չեր ընտրը-  
տվել: Այդ տեսել եր Ալեքսանն ու ծնուաները սեղ-  
մել իրար. Ալեքսանը ձախն եր խնդրել ու կրակոտ  
եր խոսել, բառերը ծուլվածքի նման իրար լետեից  
թափվել ելին:

Գյուղացիները բերանները բաց՝ լսել ելին  
նրան. բոլորը ծափահարել ելին: Մուքելն ընկճը-  
վել եր, Պապուշը դուրս եր ծլկվել ժողովից:

— Ես ա վոր պըծավ, յես դրանց հետ հա-  
շիվ չունեմ, ինձ մեղավոր դուրս բերին: Տղես ել  
մի կոնից եր խեթում, չորս կոնից ինձ ելին մտիկ  
տալիս, վոնց վոր ցիրկի թամաշա... Մեղափորու-  
թյունն Ալեքսանինն եր, վոր ինձ սիսալ հանեց,  
թյունն Ալեքսանինն եր, վոր ինձ սիսալ հանեց,  
յանի թե՝ յես իմ շահերը գիտակցում չեմ, ու ելի  
ուրիշ խոսքեր, վոր ամեն մինը մի վութ մեղ-  
ուրիշ չեր: Հիմի յես դրան վրանց մտիկ տամ.  
ըով ուտվիլ չեր: Հիմի յես դրան վրանց մտիկ տամ:  
հիմի ել պըծավ... շշնջում եր Մուքելը՝ տան մեջ-  
տեղը կանգնած:

Ալեքսանին ցանկացան, Ալեքսանն ընտրվեց  
գյուղապորհորդի նախագահ: Ոհանն ել ընտրվեց  
գյուղապորհորդի անդամ:

Ալեքսանդր շեմքում կպավ նախկին գյուղասորհը բարդի նախագահին. նա ամեւռաքները կրծասում եր, յերեսը կարմրել եր. գլուխը կախեց: Ալեքսանի դեմքի մկանները չշարժվեցին. նա հանդիսաւ եր:

Զյունը արորելով՝ զյուղացիները խումբ-խումբ ցըլում ելին տները:

Ալեքսանդր ձեռքերը խոշոր ծնոտների տակ դրած՝ շնչում եր. «Վոնց վոր մի թե, մի լեզու լինեցինք են հանքերի բանվորների հետ: Մեր բոլորի խոսքն իրար նման եր, մեր բոլորի սիրտը միտեղ եր. հնեսց ելինք իրար բռնում, վոնց վոր մի կտոր, հիմի եստեղ ենթափուր չի, եստեղ են չի... Մուքելը մեր մեջ պառակություն ացում, Մուքելը մեզ հետ հաշտ չի»:

Նրա դեմքը հանկարծ բացվեց.

— Ի՞նչ եմ նստել, գործ ելի ուզում, գործ ա, ելի, — նախագահ եմ. թող Մուքելն ըտենց անի, ինչ ուզում են անեն. ես ջուրը իրա ճամպով կզնա, ես ժամանակն իրա որենքովը կշարժվի. Մուքելը չե, Մուքելի պապերն ել գան, մազի չափ չեն կարող ծռել.

Վերկացավ, շտապ գլխարկը ծածկեց ու դուրս յեկավ:

Յերեխանները տիրել ելին, վոր Ալեքսանն եղ որն իրենց վրա չնայեց, իրենց հետ չխաղաց,

Սերոն յերբեք ալդչափ տիսուր չեր յեղել. սրախց արյուն եր գնում:

— Հիմի յես վոնց մտիկ տամ Ալեքսանի յերեսին. իմ ապին, իմ ապին ծուռ ա գնում, նոյեմն ել գիտի...

Յեթե մարդկալին ալդպիսի տիսրությունը յերկարի, մարդ կարող ե խելագարվել, յեթե չգանգի մի ուրախ հակադրություն: Իսկ պատանի Սերովի տիսրությունը կարճատե եր ու սաստիկ. նրան հակադրվեց մի ուժգին ուրախություն, վեր թռավ տեղից.

— Ապիս, համա լե՛ս, — ու ժպաց.

— Յես հո նըանց հետ եմ:

19.

Ոհանը նոր վոգեորությամբ տուն յեկավ ու հանկարծակիի գալով. սառեց. կինը չոքած աղոթում եր: Վոնց վոր աղ ու պղպեղ լցնելին, աշքերն ենակես ճպճպացրեց. դեմքի մկանները կծկը վեցին.

— Թուհ. ում համար ես աղոթք անում. աշխարքովը հազար բան անցկացավ, քու ծնկները գետնից պոկ չեկան, աստվածության փարզերը պատռեցին, տեսան սուտ չխուսներ, տառծները հատած՝ իրանք աերտերները՝ փողի թեփշիքը լուսած... զու հատկանուուն չես:

Աղոթում եմ, վոր Միջնոս սաղ սալտամով

դա, — պատասխանեց կինը՝ աղոթքը կիսամ թողած:

— Սիմոնն աղոթք չի ուզում, նրան խայտառակում ես, իմ ընկերության միջին ինձ ել ես խայտառակում:

Կինը հեկեկաց.

— Յես ձեր ընկերությունը սիրում չեմ, յես աստոծապաշտ եմ, իմ նանի աղոթքները սրախ հետ մերվել են, նոր յես թազա անորեն չեմ ըլի...

— Ոհան, արի ու դիմացի. սրա սիրաը պոկելու չի, վոր պոկես դեն գցես... մտիկ տվեք՝ վհնց ա գետնին կպել: Եղ կրոնը քու խելքն առել ա, քեզ կապել ա վհնց վոր բռնավոր. մի մտիկ տվեք սրա արտասունքներին: Ոհան, դու զնա գեղը կառավարի, քու կնիկը ժամ գնա. ոֆ, ես ի՞նչ դժար բան ա, — նա դուրս յեկավ շեմքը. ձյունը խփում եր ճակատին, կինը հեկեկում եր... Յերեխաները շվարել ելին:

Ոհանը քթի տակ հայնոյում եր.

— Քու ժամը, քու կրոնը...

20.

Զմեոը սահեց գյուղի վրայով.

Ալեքսանը գյուղացիների ամենամոտիկ բարեկամն եր. նա յեղել եր համարլա բոլոր խրճիթներում. ամենքի ցավը նա գիտեր: Նա հաշտվել եր գյուղի պարմաններին՝ առաջվա պես չեր տըիրում. աշխատանքը կրանել եր նրան:

Մուքելն եր, վոր լավ չեր նախում Ալեքսանին. ամեն անգամ մոտենում եր, ուզում եր մի բան ասել՝ վաղուցքա իր վճիռը, բայց ընկճվում եր նրա խոժոռ հայացքից և լետ եր քաշվում:

— Մարդ ոիսկ չի անում հետը խոսի, ասլանի պես մարդի սիրաը դող ա զցում, — քթի տակ վնթվնթում եր Մուքելը և հեռանում:

Յերեխաները չելքն քաշվում Ալեքսանից. նրա խիստ հայացքի տակ մեղմ ու սիրալիր ժպիտները ելին թագնված նրանց համար:

21.

— Ապի, նանի, հրես հա, ինքն եստեղ ա, — աղաղակեց տասնեւմեկ տարեկան տղան և ներս ծլկվեց գյուղխորհրդի գրասենյակը. նրա յետեկից դանդաղելով ներս մտան ապին ու նանին:

Ալեքսանը գրասենյակում մենակ եր. գրում եր: Գլուխը բարձրացրեց, նայեց նորեկներին, աեղից կանգնեց:

— Ապի, նանի, յեկեք ասեք, լսում եմ: Տասնեւմեկ տարեկանի պապն առաջ գնաց. բութ մատը գուրս յեկել պատռված տրեխից, չուխեն մաշված եր, հազիվ եր թիկունքը ծածկում: Մաղոս բկի տակը քորելով, սկսեց նա.

Ալեքսան ջան, վսակերիդ տակն ընկնենք,

մի ոգնութին արա, ասում են եղ քու գործն տ,  
չունքի դու ազնիվ նախազա յես:

— Ապի ջան, ինչի՞ յես մղկառմ, ասա, քու  
ցավին գեղ կանենք. համ ել նստի, ապի ջան:

Ապին նստեց ու փափախը զրեց գետի վրա,  
վոաքերի առաջ: Նանին շեմքի մոտ մի խարխուլ  
աթուի նստեց ծնկներն իրար կպցրած, իսկ տասնե-  
մեկ տարեկան թոռն իրենց տան պես եր զզում,  
խաղում եր սեղանի վրալի թղթերի հետ, մստե-  
նում եր պատերին, մատը դնում հետարների վրա.

— Ալեքսան ջան, մեր սկ որը տեսնում ես,  
ելի. ես ա հասակս առած մարդ եմ, մի քոմակ անող  
չունեմ: Ես իմ թոռն ա. հորն են կոփիներումը  
թոփի բերանը զցեցին, մերը մահացավ, մնաց  
յեթիմ, են ել իրա տատն ա:

Նանին ծնկները տրորում եր, պոռնկ-պոռն-  
կի դրած:

Ապին շարունակեց. Ալեքսանն առանց ընդ-  
հատելու լում եր:

— Հերու, ձեր կողքի են Պետրէիցը, են,  
փոր բարինով տուն ունի, քսան մանեթ առա-  
սերացվի համար, ձեռս քարի տակին եր. հիմի  
պարտքս դառել ա հիսուն մանեթ, փոր ասպ քյուլ-  
ֆաթս ծախեմ, տակիցը կարտալ չեմ դուրս զար:  
Լաց եմ րլում, ծիծագում, թե իմ պարտքն եղ-  
քան չի, նո ծոցիցը քյունա թղթեր ա հանում

ու աչքս կոխում, մնում եմ տաղ արած... ասում  
ա՞ ես իշխանությունը քեզ Սիբիր կղրի, վար ի-  
մանա ուրիշի փող ես ուտառմ. յես ել, գուզն ա-  
սած, վախում ելի. ես պուճուր թոռս աչքաբաց  
ա, ասեց՝ ապի, արի տանեմ խորհրդի կուշար:

Ալեքսանը գլուխը պտտում եր, զայրանում,  
ժպտում, մերթ զայրուլթից դողում: Աչքաբաց  
թոռը նայում եր Ալեքսանին, վիզը յերկարացնում  
եր, բերանը բացում, ուզում եր խոսել:

— Բալա ջան,—ասաց նանին քաշված ձայ-  
նով,—որը մին կնիկը զալիս ա, թե՛ հավերիդ ձուն  
տուր պարտքի տոկոսի տեղակ. յես ել ամօթու  
ձենս կարած՝ հավաքում եմ հավաքնի ձկերն, ի-  
րան եմ տալիս:

— Ապի, ինչի՞ ելիր ձենդ կարել, ապի, բա  
որենք չկա, բա ինչի՞ չելիր մեղանից հարցնում,  
ինչի՞ եղքան խեղճացար. ապի, կասես ես աշ-  
խարքիցը չըլես...—ապա Ալեքսանը վճռական յե-  
ղանակով ավելացըրեց.

— Հիմի նա կաեսնի՝ ով ում կիսեղղի... ով  
ում...

— Ալեքսան ջան, ամօթ ելի անում, ասում  
ելի՝ փող ա, առել եմ, պտի տամ, ասում եր՝  
ոչովի չասես, յես ու դու գիտենանք մենակ: Ես իմ  
պւուճուր թոռն աչքերս բաց արավ. հիմիկա պու-

Ճաւրիները մենձից շատ են հասկանում, յես ի՞նչ հոգին...

Թոռը կանգնած եր սեղանի մոտ, լուրջ նայվածքով:

Ալեքսանը նայեց նրա դեմքին ու ծիծաղեց:  
— Եղան կը են, ապրեն. անունդ ասա,  
դոչակ տղա:

— Սումբո՞ւ, — պատասխանեց տղան համարձակությամբ. միքիչ մնաց, վոաքերը վեր ու վար արեց, փորը քսեց սեղանին.

— Յես գիտելի, վոր դու ընտրված ես. այ, Զոլոյենց տղերքն ել գիտեն, վոր են ա նրանց գառների կուշան ելի գնում, իրանք խսում ելին, քու անումն ել գիտեն, — խոսեց Սումբո՞ւ բորիկ վոաների կրոննկների վրա կանգնած և սեղանից պինդ բռնած:

— Ապի, դու մի կապեկ ել չես տա եղ Պետրելին, արխային գնատուն, մենք գիտենք... — ասաց Ալեքսանը. — սերծացվիդ համար ել մենք կմտածենք:

Նանին ու ապին յերախտապարտ աչքերով նայեցին Ալեքսանին:

Ալեքսանը տամնեմեկ տարեկանին մի հեղափոխական պատկեր նվիրեց. տամնեմեկ տարեկանն ուրախ, թոշկոտելով՝ վազեց ապինի ու նանի քամակից:

Ալեքսանը մաքում ծրագրում էր իր գործունեցությունը. «Տեսնենք ով ում»:

22.

Զեռքերը մեջքին դրած, Պետրեն կամաց-կամաց տուն եր գնում, հենց փողոցի անկյունում հանդիպեց Ալեքսանին:

«Յես հենց քեզ ելի ուզում, դու ինձ պետք ես» — մտածեց Ալեքսանը:

Պետրեն կուզը դուրս ընկած ծեր մարդ եր, բայց հագինը նոր շորեր ելին ու նոր կոշիկներ. վոնց վոր յերիտասարդ, ենպես աշխուժ եր քայլում: Գյուղում նրան «հին գել» ելին ասում. մի ժամանակ Պետրեն զյուղի իշխանն ու տերն եր յեղել. ծերերը նրա մասին շատ բան ելին պատճում:

— Ոչո՞ւ, բարով, բարով, — բացականչեց նա, — ընկեր Ալեքսան, խորհուրդ ես գառել, չես յերեվում. յես ել ուրիշ տեղ ելի գնացել, նոր եմ յեկել ու միալար եղ ելի ասում, թե մեր Ալեքսանին, իմ լավ հարեւանին տեսնում չեմ: Իմ ողորմածիկ հերը քու հորը շատ ա սիրել, ենպես ել յես քեզ. հարեանը վորն ա, բարկամը վորն ա, արի գնանք մեր տունը, քեզ մի լավ վոչխարի խորոված ուտացնեմ. մեր իշխանության լավ մարդն ես դու, աչքիս վրա կընդունեմ:

Պետրեն հնուց մի սկզբանք ուներ, վոր առնեն դեպքում կիրառում եր և պարծանքով խոսում՝ վորպես մի քարայրած ճշմարտությոն մասին, «կաշառքը մութ տեղը լիս ա տալիս». միշտ այսպես եր մտածում ու իր ասած մարդին փորձանքի բերում:

Ալեքսանը քմծիծաղ առալով լսում եր նրան ու դանդաղ նրա հետ քայլում:

«Խելագարված հին կուլակ, ինչքան կեղծավոր ես յեղել ու աչքերդ չես բացել. տեսնենք ով ում...»:

Նույն ժամանակ Պետրելին ուրիշ մտքեր ելին վոգերում:

«Են մի նախագահին ատամիս տվի՝ փափուկ եր, սրան ել ատամիս կտամ»:

— Վժնց ես, հացդ բո՞լ ա, տնտեսությունդ կարգին ա, — հարցրեց Ալեքսանը, վորպես թե նրա տնտեսական գրությամբ մտահոգված:

— Հա, կարգին ա, այ, ես ձեռներիս աշխատանքովը, տես ինչքան կոշտեր կան. յես աշխատավոր մարդ եմ:

Ցուց տվեց ձեռքի կոշտերն ու փափախը յետ տարավ ճակատից:

— Լսել եմ, վոր դու մեր գեղացոց շատ ես ողնում հացով, փողով, — շարունակեց Ալեքսանը: Պետրեն, մի փոքր լուս, նայեց նրա յերե-

սին, ստուգելու համար, թե ինչ մաքով եր առում. ապա վոչ մի վասնգավոր բան չնկատելով, շտապեց.

— Բա, ես վոր ապրում են, շատն իմ ապրացրածն են: Գալիս են ամեն որ յերեսից կախվում — մի հինգ մանեթ, մի ասա մանեթ — ու յես տակաղ չեմ անում. մեր իշխանությունն ենքան ուժ չունի, վոր եղ սաղին ողնի:

— Հը՞մ, շատ բարի մարդ ես գու, հենց նոր քու մասին եցին պատմում. յես մինչեւ հիմի չգիտեցի: Մարդ քեզպես ըլի՛ դու աշխարհ տեսած մարդ ես, հո մեզ պես անփորձ չես:

«Փափուկ ա, սա նրանից փափուկ ա, տամարները բացվում են», — մտածում եր Պետրեն:

— Ալեքսան ջան, փորձված ենք, լավ գործ կանենք, համա վոր մեր տեղակն ես իշխանությունը քիչ ա անում, զե ասում ենք՝ թագա յա, հյամ չգիտի, կամաց կամաց. ես վերջին տարիքը մըքիչ լավ ա...

— Միքիչ լավ ա, հյա կլավանա, — կրկնեց Ալեքսանը դառը ժպիտով. — դու են ասա, սանաթներ ունես:

Պետրեն ինքն ել ժպտաց. գեռ պատանվում եր ճիշտ պատասխան տալ, բայց Ալեքսանի ժպիտը, հանգիստ նայվածքը նրան վոգերություն ներշնչեց:

«Դե վազուց իմանալի, ելի, վոր սա եսենց աելել».—ապա բարձրաձան ավելացրեց.

— Վոնց չե, հրես այ, —և ծոցից հանեց սանաթները...

Ալեքսանի շնչառությունն արագացավ, բայց իրեն զսպած, կամացուկ խոսեց.

— Մի տեսնեմ, իմ պապին ել եսենց թղթեր ուներ, —խորամանկությամբ համոզեց Ալեքսանն ու թղթերը ձեռքից վերցրեց:

«Յես միշտ ասում եմ՝ պետք ա վարվել իմանաս, պետք ա իրա տամարովը գնաս, ըսենց մարդիկ եմ ծռել...», ու հրճվում եր Պետրեն:

Հասել ելին Պետրելի տան սանդուղքին, Պետրեն Ալեքսանի թեկից բռնեց, ուզում եր վորպես հյուրի պատիվ անել, սամնդուղքը բարձրանալ:

Ալեքսանը զժկամությամբ յետ քաշվեց.

— Կաց, ել զու ես թղթերը չես ստանա, իսկ հետո դատարանը քեզ հետ հաշվի կիստի, դե հիմի դու գնա, վոչխարիդ խորովածը կեր:

Պետրեն շփոթվեց. աչքերը չուվեցին:

— Իմ աշխատանքը, իմ փողերը, ամոթ ա, Ալեքսան, վատությունն մի անի, մի որ քեզ պետք կզած, Ալեքսան...

— Եսոր պետք եկար, մնաս բարով...

— Ասու մարդդ ճանաչի, Պետրեն, ամենքի կշախի ինչի՞ յես սրատարաց, դու սիրուդ տամենքի

առաջ իմի յես բաց անում, չգիտեմ, վոր աշխարհը հարամվել ա, —ասում եր ու գլուխը ծեծում. — ասա աղքատ եմ, մեջբդ կոտրի, տնաքանդ արիր դու քեզ. ով զիտեր, ասի՝ իսեղճ բանվոր ա ելել, ինչ զիտելի ըսենց եր, —և ծնկները ծալվեցին սանդուղքի վրա:

23.

Նույն որը յեկել եր զավառալին դատախազը. Ալեքսանը զյուղական ժողով գումարեց. Նրաներկայությամբ «զել Պետրելի» սանաթները բացեց:

Ապին, նանին և նրանց տամնեմեկ տարեկան թոռը նստել ելին առաջին նստարանի վրա: Նանի աչքերը լցվել ելին արցունքով. ուրախությունից կմկմում եր.

— Ապի, վոր ասում եմ խորհրդի կուշտը գնանք, —շնչում եր թոռնիկը:

Ապին չգիտեր՝ վորից շնորհակալ լինի, սեղմում եր թոռան զլուխը, ապա յերախտապարտ աչքերը հառում Ալեքսանի վրա:

— Ազնիվ նախագահ, քու արելք յերկարի, մեզնից անպակաս ըլես. — շնչում եր ապին:

— Ալեքսանը ուրիշ բան ա, քարից զայխմ ա, լավ նախագահ ա, — ասում ելին զյուղացիները:

Ուրիշ զյուղացիներ ել զարտ ելին Պետրեն

լին. Ալեքսանն այդ սանաթներն ել կարդաց. այդ չքավորները չգիտելին՝ վոնց արտահայտելին իրենց շնորհակալությունը:

Այդ որն Ալեքսանն ուրախ եր. յերեխաների հետ յերկար կատակեց և անվրդով անկողին մտավ: Վոսները ցավում ելին, բայց սիրտը ուրախ եր, սիրտը չեր ցավում:

24.

Գարնան աշխատանքի առավոտ եր. գյուղացիները դաշտ ելին գնում հողը վարելու, արտերը ցանելու:

Այն գյուղացիները, վորոնց հողամասերը գիմացումն ելին գանվում, իրենց սալերը քշում ելին դեպի գետը: Գետը վարար ու պղտոր վըշշում եր. մարդ մտածում եր. «Ես ուր են քշում սալերը, վժնց պիտի անցնեն». սալերը հասան տախտակե հին կամուրջին, վորի վրայով հաճախ ելին քշել սալերը, և վորը միշտ ել ճոճուացել եր ու շարժվել: Առաջին սալը բարձրացավ կամուրջի վրա. սալին յերկու պարկ ցորեն եր դրված, պարկերի մոտ նստած եր գեղջկուհին իր յերեխայի հետ, սալը քշում եր ծերունի գյուղացին:

— Յեղը, հո յեղը. — Նա ճիպտեց յեզներին. Սալը որորվում եր. յերեխան ու գեղջկուհին իրար սեղմվեցին. կամուրջն ուժգնորեն շարժվեց,

ճոճուաց. նրա փատած որուներն ել չդիմացան սալի ծանրությանը — սալը ըլջվեց. յերկրորդ սալը հենց կամուրջի յեղին կանգնեց, ու գյուղացիներն ոկտեցին հարայ տալ:

Գեղջկուհին յերեխայի հետ մնացել երախտակների արանքում ու ճշում եր, ծերունին գետն եր ընկել. գյուղացիները նրան հանեցին, յերկու պարկ ցորենը ջուրը քշեց:

Մարդիկ ազատվեցին. մենակ սերմացուն ջուրը տարավ, ու յեղի վոտր կոտրվեց:

Գեղջկուհին նստել եր գետի ափին ու լաց եր լինում, իսկ ծերունին փափախը, չուխեն փոել եր արևի տակ:

Գյուղը հավաքվեց այնտեղ: Ալեքսանը կանգնել եր հենց բանդված կամուրջի յեղին, հուզված եր:

— Մի կամուրջ չենք կարում շինել, ամոթ ա մեզ համար, — ասում եր նա:

— Ինչով եր մեղավոր ես հալիվորը, վոր ենքան սերմացուն կորցրեց, ու յեղը սախաթվեց:

Գյուղացիներից մեկը կապում եր յեղի վոտքը:

— Հնկեր Ալեքսան, եղ եր իմ ումուգը, ել ուրիշ սերմացու չունեմ, — ասաց ծերունին:

— Բան չկա, ապի, մենք քեզ սերմացու կտանք, — պատասխանեց Ալեքսանը:

— Հնկեր Ալեքսան, վազուց ես կտրմունջն  
ենպես խախուս եր,— ասաց մի զյուղացի:

— Յես ել հենց եղ եմ ասում՝ մի կամուրջ  
ել չենք կարում շինել— կրկնեց Ալեքսանը:

— Այ, ասում եմ՝ ես բոլորդ կոգնեք, վոր  
ես կամուրջը թազա ու ղայխմ շինենք:

— Հա, հա, թե չե ես փիս ժամանակը բա-  
նախափան ենք լինում, չենք կարա մեր հողերը  
դնալ:

Ալեքսանը յերբեք չդադարեց, մինչև վոր  
քաղաքից վորոշ գումար ստացավ և զյուղացինե-  
րի ողնությամբ մի շարթում հաստատուն կա-  
մուրջ կապեցին:

— Ինչի՞ պտի ենպես թողնելինք, ինչի՞ չպի-  
տի թեզ շինելինք, վոր ենքան ցորենը չկորցնե-  
լինք, նաչար գեղացու յեզն ել խարաբ չըլեր.  
մինչև ջուրը կամուրջի զլուխը չի բարձրանում,  
տեղներից չենք շարժվում,— կրկնում եր Ալեք-  
սանը:

Ալեքսանի կարգադրությամբ ծերունին սեր-  
մացու ստացավ ու այս անգամ սալլը բեռնած  
ապահովշեղնոր կամուրջի վրայով. ուրիշ սալլեր  
ել յեկան ու անցան կամուրջով. կամուրջը հաս-  
տատ եր ու ամուր. զյուղացիներն ել ահ չու-  
նելին:

Այսակ ելին կուսբջիջի և կոմսոմոլի բո-  
լոր անդամները. Աղոտ լույսը յերերում եր խըր-  
ճիթ-ընթերցարանում. աղոտ լուսի տակ նրանց  
արտահայտությունը ցայտուն եր, նրանց մաքերն  
աղաղակող ելին:

Ընդհանուր ժողովի աչքերում վառվաւմ եր  
մի տեսնոտ հուզում: Այդ փոքրաթիվ ժողովում  
զրված եր մի կարեռը զեկուցում՝ Սնդիմակի կող-  
մից զիվանագիտական կապերի խզումը Խորհր-  
դավին Միության հետ:

Շշնջում ելին, հարցական նայում իրար յե-  
րեսի: Լուրը թարմ եր:

Ժողովին նախագահում եր Ալեքսանը. զեկու-  
ցում եր քաղաքից յեկած մի ընկեր:

Նոյեմբը, Սեբոն և նրանց հետ ուրիշ կոմսո-  
մոններ կլանում ելին նոր լուրը, տպապացնում  
ելին աշքներն ու շուրթները կրծում:

Զեկուցողից հետո խոսեց Բարսեղը.

Գյուղում մեր աշխատանքը պտի ըլի,  
վոնց վոր ննկեր զեկուցողն ասեց,— զյուղացուն  
սովորացնենք յերկիրը պաշտապանի, այսինքն՝ մեր  
անտեսությանը պետքան ավելի ուժ տանք, մեր  
թիկունքը պետք ա պնդենք... ըստենց պետքան  
ըլենք մենք, կուսակցականներս ու կոմսոմոլը—  
մենք եղ բոլոր դորի ու մատածունքի կառա-

վարողներն ենք, մենք իմանում ենք, վոր մենք  
հաղթող չենք...»

Միքանի խոսք ել ավելացրեց Ալեքսանը:  
— Հմի իմացանք, եղբամից պետք ա լեզ-  
րակացութին հանենք. հմի մենք պետք ա լավ  
գենք բռնել իմանանք: Հանաք չի, հմի լուրջ  
բան ա. յետ առաջ, Անգլեն ու մյուսները դադա-  
րող չեն, մեր դեմ կոիվ են պատրաստում, նրանք  
մեր ապրելն ուղում չեն, եղաքես ա թշնամի դա-  
սակարգի խասիաթը թե. վոր նրանք սարք ու  
հնարքներ ունեն, պետք ա մենք ել ունենանք,  
մենք ել զիտենանք... իմանում եք, ընկերներ:

Ժողովից հետո ամեն մեկը տանում եր նոր  
մաքեր, նոր ապավորություններ ու ծրագրում  
եր, թե այժմ ինքն ինչ նոր անելիքներ ունի  
զյուղում:

Ուշ զիշերին Ալեքսանը գես չեր քնել. շրմ.  
շրմկացնելով մաքրում եր հրացանն ու լուղում:

— Վաղուց ա ձեռս չի դիմել, հա. վոնց վոր  
խամացել եմ, — ասում եր ինքն իրեն:  
Կիսը վերմակի տակից զարմացած նայում  
եր.

— Ալեքսան, ինչ ես իմացել, — հարցրեց նա:  
— Են եմ իմացել, վոր լավ կրակել պետք ե  
իմանամ, արջերի վրա, գալերի վրա, այսինքն՝  
վոր կոիվ ըլի, զրանք պտի մեզ ուղենան ուտել,

ալսինքն՝ հին որենքների պահապան բուրժուա-

ները:

— Վայ, ելի կոիվ, — վշշաց կինը:  
— Լավ, հենց իմացար ես սհաթիս. ունքերդ  
պարզի, հլամ կոիվ չկա... Յեղավ յեղավ, են ժա-  
մանակ տեսնենք՝ ով ում. թե վոր զոռի աշխարհ  
ա, մենք ել զոռի կցցենք, ոո ձեռներս չպիտի  
ծալենք ու նստենք եղաքես: Նշան բռնել յես շատ  
եմ սիրում, — ասաց Ալեքսանն ու նորից զբաղվեց  
իր հրացանով:

26.

Գարնան շոյող արեի հետ աշխացել ելին  
կոլեկտիվի յերեխաներն ու գլխաբաց, վոտաբո-  
րիկ վազգում ելին բակում: Զմեռվա հանգստից  
ձանձրացած՝ այժմ իրենց բոլոր ուժերը հրապա-  
րակ ելին բերել:

Սոփոն ամեն անգամ բալկոն դուրս գալով՝  
շանչ եր անում դեպի խրճիթները և ատելու-  
չանչ եր անում դեպի խրճիթներին: Յերբ կաղ Պապուշն  
թիամբ նայում մանուկներին: Յերբ կաղ Պապուշն  
ալցելում եր նրան, ներս ելին մանում, դռները  
ածածկում, հետո դուրս ելին դալիս փսփսում ու  
դեպի խրճիթները նայում:

Մաղեր ծախող գնչուհու քամակից յերեխա-  
ները վազում ելին.  
— Բոշա... մաղ տուր... բոշա, ասեղ տուր...  
Յերեխաները նրան աշխից կորցրին. քիչ հե-

առ բոշան Սովորի բաղկանում հստած եր. Սովորն փափուում եր, նա մասը ծածուկ մեկնել եր զեպի հինգ խրճիթները:

— Վոր գրանք իրար, վոնց վոր շուն ու կատու, զզեն, զլիներին ինչ չոռ ասես թափի, քեզ մի հին դելրա կտամ, մեղք կտամ ու յերեսիդ ել մի բան:

Գնչունու ազրված դեմքի վրա շրթունքները յետ զնացին, սպիտակ ատամների շարքերը ժպտացին ազանորեն:

— Խանում ջան, խորոտիկ խանում, իմ գիրը զորավոր կեղնի:— Բոշան իջավ, Սովորն ներս զնաց:

Առավոտը վաղ հինգ խրճիթների շուրջն ուրուրի պես պտույտ եր գալիս զնչուհին, յերեխան մի հին փալասով մեջքին կապած, մուզերն ել ձախ ուսը զցած:

Զորս կողմը նայելով թագուն կոսնում եր նա ու խրճիթների շեմքերում ինչ-վոր բան եր թագում: Աւեքսանի խրճիթի շեմքում նենց վոր կոսցավ, նոյեմը դուրս յեկավ և յետ-յետ զնաց:

— Այ բոշա, ի՞նչ ես քանդում:

— Աղջի ջան, մաղ եմ ծախում, ասեղներ, չես առնի, — ասաց զնչուհին՝ ատամնաշաքրը ցուց տալով:

Նոյեմը կոսցավ, վոր փոքած տեղը նայի,

բաղկանից Սովորն նշան արեց զնչուհուն, զնչուհին ուժեղ թաթով լսվեց նոյեմի զլիսին, քիչ եր մնում աղջիկն ուշաթափվեր:

Սերոն հենց նոր եր զուրս յեկել խրճիթից, հասակ զնչուհու քամակից, բանեց մաղերից:

— Ասա, ջագու, մաղերդ կջարդեմ, ի՞նչ ունելիր ես աղջկա հետ:

— Ախաղեր ջան, ոտներուդ մեռնիմ, հեշ բան չեմ երե, իշտա հայ ուզի, չտվավ, — մղերտաց զնչուհին:

— Սուտ ես առում. յես տեսա, թե վճաց բամբեցիր նրա զլիսին:

Կանալք, յերեխաները շրջապատեցին նրանց. կանալք, յերեխաները շրջապատեցին նրանց. կատարը թոքահան լինելով՝ հասակ հետաքրիր վեճին:

— Ես գըբաց բոշան ա:

— Ես գիր անող ա:

Ասացին կանալք. կատարն ականջները սրել եր և աչքը զցում եր Պետրելի բալկոնին:

Սերոն թափահարեց զնչուհու ուսերը.

— Ասա, թե չե մաղերդ կջարդենք ու քեզիցը կքշենք:

Գնչուհին աղերսանքով բերանը ծռեց.

— Ախաղեր ջան, — մատը պարզեց գեպի Սովորի բալկոնը. — Են խանումը խրատ տվավ, վոր գիր կտալու. պուճուր մահչի տեր եմ, ինձ մի

զիոնչի, զիրու յետ կենեմ, զուրբան եղիսիմ քեղի:  
Կատարը շրթունքները կրծեց.

— Սերո՞, զու կոմսոնով տղա, ամոթ չի զու  
Եդ բոշի - շաշի հետ գլուխ եւ ցավացնում:

— Դու բամբասանք մանի, քու ի՞նչ դորձն  
ա, քեզ ով կանչեց, — կոպտեց Սերոն, ապա բաց  
թողեց դնչունուն և հեգնանքով նայեց դեպի  
բալկոնը:

— Գիր կապելով պաի մեղ վաստան, թող  
Եդ ըլի. — ու ծիծաղեց:

Սովոն անհանգիստ և գաղտագողի նայում  
եր այդ տեսարանին. բոռնցքները սեղմում եր  
դնչունու վրա:

Գնչունին յերեխան ճշացնելով, մաղերը ու-  
սը զցած՝ գնաց: Կատարը գուլպան գործելով  
բարձրացավ Սովոյի բալկոնը:

— Եդ խախտառակիչները, եդ շները սոկոնի  
պես տմեն տեղ դուրս են գալիս, — դնջնջում եր  
կատաղած Սովոն:

— Սուս, համբերի, ես ա հո կոփվ ա ընկնում,  
դրանց պոչը հուպ կտան, — ասում եր տերտերը. —  
Են աստվածը, Անդին վոր գա, հլամ առաջի  
սրեն սրանց կմատնեմ. — ձեռքը մեկնեց դեպի խըր-  
ձիթները:

— Թող ձիտները պոկեն, սիրտս հովանա, —  
վրա բերեց կատարը, զայրութից կոկորդը բոնը-  
ված. հետո կամացուկ ավելացրեց.

Տերտերին շատ նեղացրին...

— Պապուշին շատ նեղացրին — ասաց Սովոն:  
Յերկու սրտակից կանալք յերկար ժամանակ  
միլիթարում ելին իրար: Մին ել աղվեսի արա-  
գությամբ Պապուշը յեկավ, կամացուկ փսփսաց  
նրա ականջին.

— Վոր կոփիլ ընկավ, մենք գիտենք ու-  
սրանք, իսկ հիմի, իմացամք, — ու աղվեսի ճկու-  
նությամբ ցած թուավ:

## 27.

Ղազրովի սասած աչքերը կանգ առան, բե-  
րանը ծովեց ու միքանի անգամ հարցրեց.

— Հը, ում, խի:

— Զահրումար կի, — պատասխանեց կադ Պա-  
պուշը, վոր ձեռքը զրել եր նրա ուսին և խոսում  
համոզելով: Գլխի հին ցիլինդրը զցել եր աշ-  
եր համոզելով, շրթունքները շարժվում ելին աննկատե-  
լիորեն:

— Այ, հնակղի մարդին, հասկացամք...

— Հասկանում եմ, Ալեքսանին ես ասում  
ելի. գեղի...

— Սուս, — ընդհատեց նըան Պապուշը, — ձենդ  
փորդ զցի, ոչով չիմանա, թե չե քեզ, հա... ի-  
րիկունը կգաս ժամը:

— Ժամը... — կրկնեց Ղազրոն և ապշած,  
սարսափահար նայեց Պապուշին:

Ենաեզի մարդին...—կրկնեց նա ու բառվեցին:

Դազրոն վիզը ծռած, խեղճ-խեղճ անցավ գյուղ-խորհրդի զրասենյակի առաջից:

Ալեքսանը խոշոր ծնոտները շարժելով խոռում էր, գյուղացիները շրջապատել ելին նրան: Դազրոն շնչաց.

Ես ջանավար մարդին, դեմքը կծկվեց, կղակը ներս պցեց.—ինձ բան չի արել...—հիշեց Պապուշի խոստացած փողը:

Փորձեմ, սիրու առավ նա, մի անգամ ել նայեց Ալեքսանի բրոնզագույն դեմքին:

Դազրոն համեմատում էր իր ուժերը, նա- յում եր Ալեքսանի վրա, իրեն վրա, ապա շնչում:

Ցեթե մեկը նրան դիտեր, անպայման կհաս- կանար, թե ինչ եր մտածում Դազրոն և ում մասին. սակայն վոչփոք ժամանակ չուներ նրա- նով զբաղվելու. գարնան աշխատանքների ժա- մանակն եր, շտապ անցնում ելին գյուղացիները նրա կողքով:

Դազրոն մատները կրծոտելով գնաց. շնչում էր.

Փորձենք...

28.

Խաչված Հիսուսի անզոր ու մոռալ կերպա- րանին եր հիշեցնում գյուղի ժամը: Ետ կեղին

աչքերով նայում եր գյուղի նեղ ճամպին, վորի վրա ամեն շաբթամուտ աղոթասեր աչքերով հատ ու կենա պառավակեր ելին յերերփում ու անքա- լով բաց անում ժամի ժամը, սեացած դուռը:

Զարաձճի մանուկները քարեր ելին նետում նրա գմբեթին, համարյա բոլոր ապակիները կո- տըրտել ելին, կուլը ժամկոչին շատ անգամ ելին զալրացրել: Նա ժամի պես մոալ ու անզոր պը- պըզել եր շեմքում, մինչև տերտերի գալը:

Տերտերը կարձահասակ եր ու գեղին մորու- քով. հաստ գավազանը զցելով գուլք յեկավ ժա- մի ճամպին: Անհանգիստ մանուկները քարեր ե- լին նետում ժամի ապակիներին: Ժամկոչը ներս եր գնացել ու հիմի յել չորացել զանգակատան տակ:

— Անիծյաներ, փուչեր, վնթինթաց տեր- տերն ու բարկացած մտավ ժամը, հրեց ժամկո- չին, վոր չորացած ձեռքերով կախվել եր գան- գակատան թոկերից:

Նրա կուլը աչքերը ճպճպացին, դեմքը կնձռոտեց:

— Թու ել ա աչք չունես, վոր տեսնես՝ ինչ կա, ինչ են անում լակոտները. քեզպես քոռերն են մնացել...

— Աման, տերտեր, յես սակ սատանան գի- պավ կողքիս, — մրմիջաց ժամկոչը:

— Բա վոր ինձ ուրիշ սատանեք են դիպշում, — պատասխանեց տերաերն ու նայեց չորս կողմը:

Ոհանի ասավածավախ կինը ներս մտավ, շալի տակից հանեց մոմը, խորանի առաջ վառեց ու չոքեց:

Տերտերն աչքի պոչով նայում եր նրան:

Մի յերկու պառավեր ել յեկան ու շնչուցով չոքեցին:

Տերտերն սկսեց ժամասացությունը, սակայն հայացքն անհանգիստ եր, բառերը կուլ եր տալիս, աչքը դուռնն եր:

Կամացուկ ներս սորորաց այրի կատարը, խորամանկ և մանր աչքերով գննեց տերտերին զլխից մինչև վոտների ծալը, առա կանգնեց պատի տակ:

Միենուին բառերը միքանի անգամ տերտերը կրկնում եր, նայում կատարին: Կատարը սիրալիք, համեստ աչքերը խոնարհում եր ու շնչում.

— Զան տերտեր, աղոթքիդ մատաղ, միրուքիդ մատաղ...

Քիչ հետո Պետրելի կինը, Սոփոն սորորաց, խաս շորը զլխին զցած՝ կանգնեց կատարի զիմաց, պատի տակ. զիտում եր շուրջը, խեթմեթում Ոհանի կնոջը:

Կաղ Պապուշը, Պետրեն ու Ղաղըն ել յե-

կան, վանց վոր իրար ըերճի թքած՝ ցլվեցին ամենը մի կողմը. Ղաղըն հենվեց սյունին, շարունակ շարժվում եր:

Պապուշը դանգաղ սահում եր դեպի Սոփոն, Պետրեն կանգնել եր առանձին:

Յեթե ծնկաչոք պառավերը գլուխները բարձրացնեցին, և աչքերն աղոթքի մշուշը պատելին, անպայման այդ գենքերի վրա մի ընդհանուր կնիք, մի խորհրդածություն կնկատելին:

Ոհանի կինը մտատանջվում եր այն մտքով, թե ինչու Պետրելի ու մտւսի նման մարդիկ ժամ են գալիս, հավատում են, իսկ Ոհանի ու Ալեքսանի նման մարդիկ անհավատ են, և չեր կարողանում բացատրել, թե ինչու յեն նրանք մոլորվել:

Տերտերի անհասկանալի աղոթքները խառնը վել ելին պառավերի շնչնցոցին և մի ժամգուն հերցուրանք ելին լցըել ժամը:

Ժամկոչը միքանի անգամ ուժով կախվեց զանգակատան թոկերից, զընգ... զընգ... նվազ ու խնդւ վողբացին զանգերը:

Ոհանի կինը միքանի անգամ յերեսը խաչակնքեց, շուրջն առանց նայելու, փեշերը հավաքած՝ դուրս յեկավ: Մյուս պառավերն ել զլուխը զլխի տված՝ դուրս յեկան ու որորվող բաղերի պես ընկան ճամպեն:

Տերսերը բեռից իջավ, զիրը ծալեց, նայեց  
չորս կողմը խուզարկու հայոցը ըստ:

— Մերոնք են, — շնչաց. ժամկոչից բահա-  
լիները վերցրեց, ժամի գուռը փակեց:

— ԴԵՅ, զավակներս, յեկեք այսակդ:

Բոլորը խորհրդավորությամբ մոտեցան բե-  
մին. Կաստարը նստեց բեմի վրա, Պապուշն ու  
Սոփոն կանգնեցին իրար կողքի, Պետրեն հենվեց  
խորանի պատին, Ղազրոն զրբակալին: Իսկ ժամ-  
կոչը վրուխը կախ, թոկերը բռնած՝ նստել եր:  
Նրա դեմքը սառած եր, մոմի պես դժգույն, նա  
վոչինչ չեր հասկանում. իր անբողջ կյանքում  
ժամկոչ եր յեղել, բացի զանգի ու աղոթքի ձայ-  
ներից ուրիշ ձայներ չեր կարողանում վորոշել:

— Վճաց վոր մի սատանա, գեղացիներին  
թարսում ա, ինչքան բան արեց դա, այ եսքա-  
նիս դուշմանն ա, կոմմունիստ ա դառել ու մի  
կրակ մեր գլխին: Ինքը սուրբ աստվածը վկա,  
վրա անիրավությանը չափ չկա. վրա պատիժը  
մենք պիտի տանք. — խոսեց տերտերը ցածր ձայ-  
նով:

Ղազրոն աչքերը պլշած, ապշությամբ լսում եր:

— Տերտերը գուզ ա ասում. տերտերի իեկե-  
րը կարուկ ա, — շարունակեց կատարը:

— Վերջացնենք. — ավելացրեց Սոփոն:

— Ղազրոն ա մեր հույսը, մեր քաջը. միան-

գանձից մեջաեղից զուրս կլա, վրա բերեց Պա-  
պուշը զալբուժով:

Ղազրոն նայում էր նրանց յերեսին. նրա  
ուղեղը առվորականից ավելի յեր մթագնել:

Գյուղում Ղազրոյին լավ ելին ճանաչում.  
ասում ելին՝ «գիտ Ղազրո», վորովհետեւ նա սո-  
վորական մարդի մտածողությունն ու դատողու-  
թյունը չուներ:

Մենակ եր, խումբը նրան հաշվի յեր առ-  
նում, նրա ուժից պատկառում ելին. մի անգամ  
հանդում մի թուրք եր խեղգել, սակայն նրանք  
չելին ուզում հավատալ, վոր թուրքին քնած ժա-  
մանակ եր խեղգել:

— Զմտածես, Ղազրո, Յելբուղից ել կպահ.  
կոխվ ա, Ղազրո, գրանց դեմ. Են վախտը մենք  
ու դու զիտենք մեր հաշիվը... ասում եր Պա-  
պուշը:

Տերտերը խփեց Ղազրոյի ուսին.

— Հավատքը, զավակս, կհաղթի, առ աստված  
կրարձրացնենք մեր ձայնը:

Իսկ Պետրեն խսխուռն ձայնով մի-մի բառ  
եր շպրտում. նա չեր մտացել իր սանաթները...  
ժամկոչը ննջում եր, դեմքն արտահայտու-  
թյունից զուրկ եր և այրված մոմի յեր նման:

Ինչ թափուր վերջացնենք, — մասները  
կրծոնելով հարցրեց Ղազրոն:

— Թաջ Ղազլու, զու գիտես, եղ քու բանն  
ա, ոփոլվեր կտանք քեզ, ցած կդորես եղ մե-  
ղավորին:

— Կորհմ, — կրկնեց Ղազլոն, վոտքերն ի-  
րար քսելով:

Ղազլոյի տեղը նեղ եր... նա ուզում եր հրա-  
ժարվել, բայց ելի վախենում եր. «Եսքան ճոգով  
վրա կթափվեն, ինձ կխեղպեն», մտածում եր:  
«Ի՞նչ կիներ, ես անշարժ գրքակալի տեղը ըլե-  
լի, եսքան բանն ին գլուխը չգար»:

Տերտերը վոգեռվեց.

— Թէ Ղազլոյի նման եսպես միքանի քա-  
ջեր դուրս գալին, սատանաներին կքշելինք մեր  
յերկրիցը:

Պետրեն ավելի խոր եր մտածում, մինչ այդ  
չեր խոսել.

— Հանաք մ, դուք եղպես հեշտ-հեշտ խո-  
սում եք, սաղ աշխարքի սրտումը մեխի պես  
խրվել են, հենց գիտեք հանաք ա. Ալեքսանին  
վերջացրիք, մի ուրիշը կնսուի նրա տեղը...

Բոլորի դեմքին դժկամության կնճիռներ  
հայտնվեցին:

— Կոիլը դու չես իմացել, Անզլիան կոիլ  
ա գալիս, — ձախ տվեց Պապուշը:

— Դրանք ինչ են. վոր փշեմ կթռչեն, —  
սիրտ առավ ու պարծեցավ Ղազլոն:

Մյուսները ժպտացին. Պետրեն կասկածով  
եր լսում այդ բոլորը.

— Հենց գիտեք հեշտ ա. յես իմ վորձից  
գիտեմ. եսքան տարի Պետրելի զլսին եղպես բան  
չեր եկել, գրանք բերին. զրանց լիզվի ու գործի  
հախիցը շատ դժար ա գալ:

Մութն եր ժամում, հազիվ ելին իրար աչք  
նշմարում: Պետրելի խոսքերից հետո Ղազլոն  
մթության մեջ շրթունքները կրծեց, կպազ գըր-  
քակալին: Ամեն մեկն փրեն մեջ վախենում եր,  
բայց չեր արտահայտում:

— Ղազլոն գիտի, Ղազլոն քաջ... Յեվրոպից  
կգան, կոիլ ա պատրաստվում, — կրկնում եր Պա-  
պուշը:

— Վոնց, ինչի հմար, — հարցը ղազլոն:

— Եղ քու խելքի բանը չի. հետո կիմանաս.  
հիմի քեզ ինչ ասում ենք, են արա, — պատաս-  
խանեց Պապուշը:

— Տեր հայր, լավ, բա վոր մեկ ել սիփոլը  
ժանգոս ըլի՛ չտրաքի, — աղերսող տոնով ձախն  
տվեց Ղազլոն:

— Պապական ոիկոլ ա, կտրաքի, ձեռիդ զա-  
լիմ կբռնես ու զարառու կկանզնես:

Ղազլոյի սիրտն սկսեց արագ բարեախել. մի-  
թե ամեն ինչ վճռված եր. նա պիտի գործեր, —  
այդ դաժան մտքից քիչ եր մնում ուշաթափվեր:

— Վայ-վայ, — անքում եր նա. մթության  
մեջ դեմքը չելին տեսնում, կծկվել եր զրքակա-  
լի տակ:

— Ի՞նչ, ի՞նչ պատահեց, — շփոթվեցին մյուս-  
ները:

— Հետ, մի զաֆիլ տեղը սիրառ ցավեց,  
վայ... վայ, ուժ...

Նրանցից և վոչ մեկը չեր հասկանում դադ-  
րովի տանջանքները:

— Վոչինչ, զավակա, եգուց մի երկու թառ  
արագ կիսմես, սրտիդ ցավը կնսաի...

Մթության մեջ կատարը սեղմվել եր տեր-  
տերին, տերտերի ձեռքը ճանապարհորդություն-  
եր կատարում նրա մարմնի վրայով։ Պապուշը  
Սոփուին եր հենվել, Պետրեն մենակ, մթության  
մեջ խարխափում եր. գիշերները նրա աչքերը  
բռնվում ելին, այդ լավ զիտեր Սոփուն։ Բայց  
Պետրեն խում եր նրանց բարձր շնչառությունն  
ու վաս նախազգացումով լցվում։

— Յես համաձայն չեմ, — հանկարծ բայցա-  
կանչեց Պետրեն։

Մյուսները տեղներից վեր թռան։

Դազրոն ուրախ ուզում եր բացականչել՝ յես  
ել, բայց ձենը փորը զցեց։

— Մեր խորհուրդը դու խախտում ես. գի-  
տես, վոր մենք զործում ենք հանուն կլոսի,

աղջի, ամրող աշխարքի համար, — բացական-  
չեց Պապուշը։

— Իմ կնիկը...

— Քու կնիկն ել համաձայն ա...

— Եղ չեմ տառւմ...

— Քու կնիկը քեզանից անահ ա...

Զելին թողնում, վոր Պետրեն խոսքը վերջաց-  
ներ։

Ժամկոչը քնի մեջ շարժվեց, ու զանդերը  
թռուլ զնդացին։

Տերաերը վախեցած վաղեց ու այնպիսի ու-  
ժով քաշեց ժամկոչի ականջները, վոր քիչ եր  
մնում պոկվելին։

Ժամկոչն աղիողործ մրմիջաց։ Բոլորի ուշա-  
դրությունն այն կողմը դարձավ, բացի Դազրուից.  
Նրա մաքերը պղասը ելին. նրա սիրաը սարսա-  
փով լի յեր։

Զգուշ և առանձին-առանձին ցրվեցին բո-  
լորը. ժամկոչը քնաթաթախ վակում եր ժամի  
դուռը։

Մի սավեր հեռվում դանդաղ անցավ. խոր-  
հըրդակիցները դողդողացին, չխմացան՝ ով եր...  
Մազաթափ մի քոսոտ շուն եր, վոր պոչը վոտ-  
ների արանքն արած՝ անցնում եր վոչվոք չի-  
մացավ, թե սմոցնողը շուն եր։

Մի շաբաթ Զազրոն տանից դուրս չեկավ.  
տնեցիներից թաղուն, թնկթներում եր անկյուն-  
ներում խոռվկան յերեխի պես:

— Զոռով շառի մեջ դցեցին, եգուց բան-  
ար կնասեմ, չետով ել ճիտո կպոկեն... ինչ ա-  
նեմ, փորձեմ...— շշնջում եր:

Ասոն ելի կովեց, հախն եր ուզում տերտերից:  
— Յես զիտեմ՝ դուք ինչ եք, տերտեր,  
համ սպասի, համ կաց, — աղաղակում եր սպառ-  
նալից տոնով Ասոն:

Տերտերն սկսեց դողալ. մատը կծեց:

— Կա, չկա՝ սա յեր, են գիշերվանը. սա լրտե-  
սում եր. կորանք. սա նրանցից ա...

Մի վարկան տերտերը չկորցրեց, ու Ասո-  
նին գիշերն իրենց մարագը դցեցին. վոչվոք չի-  
մացավ. խուլ ու լուռ գիշեր եր...

Նույն ժամին ատրճանակը ձեռքում պահած՝  
Զազրոն կուչ յեկավ Ալեքսանի խրճիթի մոտ:

Միքանի փամփուշտ գրաննն եր զցել, մի  
փամփուշտ ել ատրճանակում կար:

— Տեմնեմ վհնց ե, փորձեմ. — Նրա ձեռքը  
դողում եր, ատամներն իրար զարկվելով չխչըխ-  
կում եին, ականջին տրաքոցներ եին լավում,  
զեր եր թռչում, ատրճանակը դնում եր կետնին,  
նորից վերցնում:

Ալեքսանը ժողովից ուշ վերադարձավ:  
Զազրոն կորցրեց հավասարակշռությունը,  
մեջքի վրա յետ գնաց, ձեռքը դողաց, — ատրճա-  
նակը տրաքեց պիստոնի պես:

Ալեքսանի ականջը վարժ եր պայմանների.  
հանքերում եր բանել. չցնցվեց:

— Աման, վայ, սպանվեց...

Ալեքսանը վազեց տրաքոցի կողմը, աեսավ  
մեջքի վրա ընկած եր նա, ատրճանակը կողքին.  
կարծեց սպանված ե, շարժեց...

— Ալեքսան ախպեր, — Զազրոն ցատկեց տե-  
ղից ու խենթացած հայացըով նաևց. — Սադ ես  
մնացել... աստոծ, սրա կոնիցն ելիր...

Ալեքսանը քարացել եր:

— Ուզում ելի քեզ սպանեմ, ներողություն,  
վայ, — բղավում եր. — Ձեր կոնիցն ելի, զաֆիլ  
դառա նրանց կոնիցը. վայ, Ալեքսան, մեղք արի  
ինձ:

Ալեքսանը վերցրեց ատրճանակը, բռնեց նրա  
թեփ, տարավ ներս: Գյուղացիները լցվեցին  
խրճիթը. Ալեքսանը հանգստացը կնոջը, յերե-  
խաներին, վոր վախեցած ելին:

Ճրագի դեմ, բրոնզեգույն ու խոշորագեմ  
մարդը ժպտով, հանգիստ նայում եր գունաթափ,  
սարսափահար Զազրովին:

Հազրոյի ծուռ բերանը սովորականից ավելի յեր ծովել, ու անկյունով ջուր եր վագում:

— Այ, մտիկ արա, իսկական սպանելու միտք չունեի, ասի փորձեմ, հնենց, ելի, մի հատ պատրոն եր միջին, մնացածը ջերս ելի գցել:

Ալեքսանը ժպտում եր դառնությամբ և խըղահարվում Հազրոյին:

Գյուղացիները վրդովված գոշում ելին.

— Դրան բռնենք, եղ շաշ Հազրոյին, վոր մարդասպանություն եր անում:

Հազրոն ել սկսեց բղավել.

— Թռղեք գնամ. յես իմ ձեռով կտրատեմ տերտերին, Պալուշին, իրանց կնանոնցը. ինձ նրանք խրատեցին:

— Խեղճ մարդ ես, դինջ կաց միքիչ, խաղաղի. յես զիտեմ, վոր եղ քու սարքածը չի, ասում եր Ալեքսանը.

— Հիմի քու կոնիցն եմ. — ուզում եր ընկել Ալեքսանի վոտները. Ալեքսանն ուժով բռնել եր նրան:

Գյուղացիները զարմացած խոսում ելին իրար մեջ:

— Սադ նրանց սարքածն ա:

— Հազրոյին խրատել են:

✓ եղ մարդասպանին բաց շթողանիք:  
Ալեքսանը ծնոսները շարժեց.

— Բոնենք մի խեղճ վոչխարէ՞. թե վոր ինձ ու ձեզ պես խելքը բաներ, են վախար, հո...

— Դուզ ա, Ալեքսան, վոչխար եմ, անմեղք եմ..

Ալեքսանն ամեն ինչ հասկացել եր և մտազքաղ շոյում եր փոքրիկ տղայի գլուխը, վոր փաթաթվել եր հոր վոտքերին:

Ասրձանակը, փամփուշտները վերցրեց ու Հազրոյին ճանապարհ գրեց.

— Հազրն, ըտենց փորձեր ել չանես, երեխերդ մեղք են:

— Վայ, Ալեքսան, թող վաճներդ ընկնեմ, սիրաս զինջանա, հիմի քու կռնիցն եմ, ուզում եմ՝ սամ գնամ քարափիցն ընկնեմ, — Հազրոն հեկաց, ջուրը ծորում եր բերանի անկյունից:

Ալեքսանը հուզվեց:

— Գնա, Հազրն, դու չես, նրանք են մեծ շաշերը, զժերը:

Ամբողջ ժամանակ Մուքելը ամսից գլուխը չհանեց. լսել եր տրաքոցն ու գլուխը վերմակի տակ թաղցրել. «Իմ հաշիվը չի, իմ զործը չի. վոր ասում եմ՝ մեր զիմին եղ մարդի երեսիցը շառ կզա». միալար եղ եր մտածում: Իսկ Ոհանը, Գարոն, Յեղարը վրդովված՝ պտավում ելին Ալեքսանի շուրջը:

Նույն ժամին, դաղտագողի, խուլ ձանապարհ-  
ներով Սոփոն լուրջ հասցըեց Պապուշին:

Պապուշը ձին թաճքեց ու զյուղից փախավ:

30.

Ալեքսանը վաղ առավոտ արթնացավ. զյու-  
խը ծանրացած եր. տենտոտ ու անակնկալ գեղ-  
քերը հաջորդում եցին իրար, — զարնան բացվելու  
հետ նա ազատ չեր շնչել:

Վատաքերի ցավը սաստկացել եր, չեր կարո-  
ղանում արագ քայլել. նա դնաց զյուղիսուրդ,  
գրություններ ուղարկեց գավառալին միլիցիալին  
և դատախազին: Բարսեղը յեկավ նրա մոտ. խոր-  
հըրդակցում եցին:

Սերոն կոմսոմոլի զործով մոտիկ գյուղն եր  
դնացել և վերադառնում եր. գիշերվա դեպքին  
նա աեղյակ չեր: Ուզում եր մտնել զյուղիսոր-  
հըրդի գրասենյակը, հանկարծ լացի ձախն դիպավ  
ականջին, կանգնեց:

— Աման. բալա ջան, Ասո ջան, նանիդ աչ-  
քերը դուրս գան, նանդ չորանա, երկու որ հան-  
դումը մնաց, ել յետ չեկավ...

Հոտաղ Ասովի տատն եր՝ նա վոտաբորիկ  
բարձրանում եր բլուրը: Սերոն վագեց նրա յե-  
տեից:

Յերեք որ եր վնասում եցին Ասովին: Տեր-

աերն ել մարդիկ եր զցել բլուրները ու ինքն-  
ել մասհոգված եր յերեսում:

Գյուղը խոսում եր եղ մասին, վոր Ասոն վո-  
տով-գյիսով կորավ. վոր Ասովի նանը խելքը կթոցնի:

Ասոյինց խրճիթը գյուղից բավական հեռու  
յեր, գեանափոր: Ասոն եր պահում իր ծերացած  
տատին, ու նա միշտ Ասովի արեսվի եր յերգվում,  
նրա համար եր ապրում:

Յերեք որ եր՝ տատը հաց չեր կերել, յերեք  
որ ծոմ եր, Ծալապատիկ նստել եր խսիրի վրա.  
հարեւանուհին ապուր եր բերել. ինդքում եր, վոր  
ուտի...

Ծերունի տատը փայտե գդալը մոտեցնում  
եր շրթունքներին, արցունքները գլորվում եցին  
կավե ամանի մեջ, գդալը յետ եր բերում. հարե-  
կանուհին ցավակցորեն նայում եր:

Սերոն ներս մտավ: Սերովին վոր տեսավ,  
չորացած ձեռքերը մեկնեց դեպի նրան.

— Սերո ջան, բալա ջան, Ասովին բերիր..  
Ասոն վոր չոլումը մնաց, Ասովիս դուդուկն անտեր  
մնաց, Ասովիս դուդուկը լաց ա ըլում. . բա, Ա-  
սովի նանն ել ինչի ապրի...

Սերոն հազիկ եր զապում արցունքները,  
շուռ եր գալիս դեպի պատը:

— Նանի, Ասովին յետ կճարեմ, նանի, սպա-

սրգ կեր, տասց Սերմն տիտուր, լայտակումած  
ձայնով:

Տառը քիչ եր մնում Սերովի վոտքերն ընկ-  
ներ, մորթվող վոչխարինման թպրտում եր խսիրի  
վրա:

31.

Կարկտածորը հեռու յեր. ենտեղ ելին քշում  
վոչխարները, քանի վոր ենտեղի խոտը հցութոս,  
կաթնոտ եր:

Սերոն գնում եր հարցուփորձ անելու, Ա-  
սովին գնտուելու:

Սերովի ճանապարհը կանաչոտ եր, բայց  
սիրար տիտուր. Ասովի կորչելուց հետո զիշերները  
չեր ընում: Հիշում եր Ասովի քաղցր նվազը, Ասո-  
վի անկեղծ ընկերությունը...

Նա քայլում եր մատազբաղ. ասես լսում եր  
Ասովի գուգուկի ձախը. քամին սլալում եր բլուր-  
ներից ու դիպչում ականջին. լսում եր... զլուխը  
բարձրացրեց, հասել եր Կարկտածորը:

Հոտաղներից միքամիսը պառկած ելին, մի-  
քանիսն ել զրուցում ելին:

Ասոն ձեղ հետ եր, Ասովի տեղը վհնց ա-  
չգիտեք դուքք:

Հոտաղները նայում ելին Սերովի բերանին.  
Նրանցից ամեն մեկն աշխատում եր հիշել, թե  
յերբ եր, վոր Ասոն ել չերեաց:

— Ասոն մեր լավ հնկերն եր:  
— Ասոն մեր լավ դուգուկ ածովն եր,  
ասում ելին նրանք և տիտուր նայում:  
— Ենքան ենք ես ձորում ման եկել:  
— Շվացրել՝ հել, հել, Ասո...  
— Ասում ենք, թե ինքն իրան ջուրն ա-  
ղցել...

— Ասում ենք, թե աղջիկ եր սիրել...

Սերոն գլուխն որորեց.

— Ասոն իրան սպանող չեր:  
— Տերտերանց վոչխարները հիմի ուրիշ  
կուռ են քշում, ասաց հոտաղներից մեկը՝ տեղից  
կանգնելով. — Են միտս ա, վոր Ասոն տերտերի  
դսանը՝ տերտերին ուշունց եր տալիս, յես մտիկ  
չարի, վոչխարները քշեցի. ասի՝ Ասոն ել իմ քա-  
մակից կգա, ու մի որից յետն ել տեսանք վոչ:

Մի ձութ կասկած պտույտ եր գալիս Սերովի  
գլխում: Քայլերը դանդաղել ելին, նայում եր  
գեպի տերտերենց տունը... կանգ առնում, գնում,  
ելի կանգնում...

Մեկը ձգեց Սերովի թեկից. յոթ տարեկան  
մի աղա յեր նա, պատառուալած շորերով, գրլ-  
խարաց. լսել եր, վոր Ասոն կորել եր, ու Ասովի  
բնկերն եր Սերոն. Սերոն կուցավ նա մանկա-  
կոն շուրթերը մասեցրեց Սերովի ականջին, մի  
բան շշնջաց, ու յերկուսով վագեցին: Ծովեցին,

քահոգված ջրաղացի գլխով բարձրացան, հետո ի-  
շան փոսը:

Յերբ հասան տերտերի տանը, յերեխան  
զդուշորեն մատը մեկնեց:

— Այ, ենտեղ, սրանց մարագի շեմքում Ա-  
սուի տրեխի թալը վեր ընկած եր, իրանց պու-  
ճու երեխեն բերեց, առվի վրա լողկա յեր շի-  
նել. յես ու նա կովեցինք. նա ասեց՝ մերը չի,  
մեր նոքարինը չի... տերտերի կնիկն ինձ եր,  
նրան ել ծեծեց, արեխի թալը զցեց են փոսը,  
ցուց տվեց արտաքնոցի տեղը:

Սերոն շրթունքներն այնպես կծեց, վոր ար-  
նեցին. նա գաղտագողի մտավ բակը, հետո մա-  
րագի նեղ լուսամուտը գտավ. մի փոքր շունչ  
առավ ու դլուխը կոխեց լուսամուտից ներս:

Սերոի գունն սպիտակեց. Սաուի փափախն  
ու արեխները տեսավ, աչքերը մթնեցին.

— Սրանք են սպանել... գելի պես կերել են  
Ասուին:

Փոքրիկ տղան վախեցած նայում եր Սերո-  
վին. Սերոն տղայի ականջին շնչաց, տղան հե-  
ռացավ մարագի կողքից, իսկ ինքը զնդակի ա-  
րաշությամբ վազեց գեղի ցած:

Նրա գեմքը սպրինած եր. արեխների թե-  
րեւ արձակվել ելին:

32.

Կանգնեցին տերտերի մարագի առաջ՝ Ալեք-  
սանը, Բարսեղը, միքանի կոմսոմոլիստներ ու  
Սերոն:

Ալեքսանն ատամները սեղմում եր. լուռ եր.  
Սերոն հուզմունքից գոզում եր. կոմսոմոլիստնե-  
րից մեկը տերտերի գուռը բազեց. գուրու յեկալ  
տերտերի պառավ կինը, պոռշները կապտած:

— Ի՞նչ կա, ինչից յեք գուռներս կտրել,  
ասաց նա շփոթված և սուս անքանքոցով:

— Արի մարագի գուռը բաց արա. Ինչեց  
Ալեքսանի ձախնը:

— Ի՞նչ ես կամաց գալիս, թեղ արա. վրա  
բերեց Բարսեղը:

— Տերտերը տանը չի, ժամումն ա, յես բա-  
լանիքի տեղը գիտեմ վոչ...

— Թե բաց չես անում, մենք բաց կանենք, —  
ասաց Ալեքսանն ու վոտքով խիեց մարագի  
գուռնը:

Տերտերի կինը կմկմաց, զնաց առուն ու վե-  
րագարձավ, վնթինթալով գուռը բացեց:

— Բնը, ի՞նչ կա, խազնա յենք պահել, գար-  
դակ մարագ ա:

Սերոն առաջինը ներս մտավ:

Մարագը մոաց ու մոթ եր. խոնավ ողի

հետ ինչ-վոր անախործ հստ եր խառնվել, վոնց  
վոր թունավոր գաղ լիներ, ենակեռ դուխները  
բռնեց:

Լուռ խուզարկություն եր, խոժոռ հայացք-  
ները պտտում ելին:

Մարսագի մի անկյունում քարեր կտին դի-  
զած. Ասոյի փափախը, արեխի մի թալը քարերի-  
տակից լերեւմ ելին... Սերոն սպրդնած վրա  
ընկավ, քարերը լետ զցեց, քարերի տակից մտւո  
կոմսոմոլիստների ողնությամբ դուրս քաշեց Ա-  
սոյի ագանդակված դիակը:

— Վայ, Ասոն ջան,—բուզեց նա:

— Քարերով են սպանել, հրես ճակտար  
պատուած, լերեսն արյունլվիկ:

Միքամի վայրկյան Ալեքսանը չեր կարողա-  
նում բառ արտասանել:

— Ես ինչ ա,—հարցրեց Բարսեղը տերաե-  
րի կողջը, վրբը կողել եր պատին. մյուսները քա-  
րացել ելին:

— Մենք ինչ զիտենք, մվա խաբար, տեր-  
աերը հազար թշնամի ունի, հալբաթ եղ թշնա-  
միքն են արել: Աստոծ, աստոծ... յես ել եմ վշա-  
քաղվում...

Սաւո, սաս՝ աղեղ մւր ա, հարցրեց Ա-  
լեքսանը:

Տղես ինչից ո խորար, վաղուց քաղաք  
ո գնացել. վույ վույ անող, կրակին...

Զենդ կարի, ինչ ես արջի ուես վոս-  
նում, բղավեց Ալեքսանը հազիվ զսպված:

— Գաղանություն, մարգակերություն. թող  
կեղն խմանա, թե սրանք ինչ են...

Պառավը տնքանքալով դուրս լեկավ. հա-  
զիվ եր քայլում. պողները կանաչել ելին: Մա-  
րսագի բանալին Ալեքսանը վերցրեց:

— Գնանք:

Բոլորը լուռ հետեւցին նրան: Տերտերի կի-  
նըն իրենց շեմքից բղավում եր.

— Պետրելի կնկա արածն ա, աղիս զավթել  
ա, են բոզ կատարն ել տերտերի լետի կնիկն եր  
դառել... ինձ մեջ չխառնեք, աման...

Գյուղն ալեկոծվում եր. կանաք, յերեխանե-  
րը վազում ելին. գյուղը հուզված եր. յեթե մի  
ոտար մարդ մոտենար գյուղին, պիտի յենթա-  
զրեր, փոր գյուղն առանց բոցի՝ հրդեհվում եր:

Գյուղխորհրդի դրասենակի առաջ ահազին  
բազմություն եր կուտիել: Հոտազները բըրից ցած  
ելին թռչում, առանց իրար հետ խոսելու, շրշ-  
կըլված:

Ասոյի դիակը դրված եր շեմքում, փաթա-  
թել ելին կարմիր կտորի մեջ: Ասոյի տատը դետ-  
նովը եր դիպչում, նրան հազիվ ելին պահում:

Գյուղացիների միջից բարձրացավ նա, բրոնզե քանդակի պիս, կանգնեց. պողպատի հարվածների պիս հնչեց Ալեքսանի ձախը. այդ որրոշակ բրոնզանման ու ահարկու յեր: Շշուկները դադարեցին և բազմության բազմաքանդակ քարացած դեմքը դարձավ գեղի խռովով:

Բնիկներ գյուղացիներ, տեսնում եք Ասուին, են ջաճել հոտաղ տղեն ինչու, ինչ թափուր ասպանված... ձախը յերերաց. բոլորը սպասում ենին:

Բնիկներ գյուղացիներ, հիմի մենք լաց չենք ըլում... ես դուշմանությունով մեր արեխի բիթն ել չեն ծոփ, ընդուր վոր ես սաղ կանգնած ենք, ընդուր վոր իրար բռնած ենք... Ասովին սպանեցին նրա համար, վոր նա մեղ հետ եր, իրանց խոսքով չեր գնում... Սրանք իմանում են, թե կոփի ա, ու մենք հաղթվում ենք. ել իմանում չեն, վոր սինդ ենք, այ, եսենց. ցուց տվեց ամուր ըստնցցը:

Մեր յերկիրը շինենք, մեր տնտեսությունն առաջ տանենք, մեր յերկիրը պաշտպանենք չքափոր ու միջակ գյուղացու ու բանվորի հետ:

Մնաս բարով, Ասո, մեր ոջախը մենք սաղ աշխարքում պտի վառենք...

«Ես ջուրն իրա ճամպովը կզնա, ես ժամանակն իրա որենքովը կշարժ մի», թող սաղ իմանան...

Դեռ միքանի վայրկան շշուկները սառել են կանաք արտասվում ելին, տղամարդիկ հառաչում. Հազրոն արտասվում եր յերեխի պիս ու շշնջում.

— Յես ձեր կոնիցն եմ, դորի ա, դուզ ես ասում, Ալեքսան, քիչ եր մնում ինձ ել արնաեր շինելին:

Խոսեց Սերոն.

— Մեր հոտաղ հնկորը սպանեցին մենք բոլորում ենք...

Բազմության միջից ձայներ լսվեցին.

— Բողոքում ենք, լտենց ա...

— Նրա արինը յետ ենք ուզում...

Փոքրիկ հոտաղները լացակումած՝ մոտենում եին Ասովի գիտին, փափախները հանում, համբուրում ելին ճակատը:

Ասովի տատը չոքելներ կողքին, կանաք բռնել ելին նրան. տատի ձախը կտրվել եր շշնջում եր.

— Ասո ջան, քեզ վարդ են շինել ու զբել եստեղ. Ասո ջան, եսքանը քեզ համար ցալում ա... Ասո ջան դուզուկդ խի չես ածում...

33.

Հետեալ առավոտ Ասովի գիտիք տեղափոխում ելին քաղաքի հիվանդանոցը. բննություն պիտի կասարվեր:

Սերոն ձի հեծած թռչում եր առաջից։ Դիաւ-  
կի հետ դնում եր և Ղազրոն։

Տերտերի, Պետրելի անեցիները կալանքի տակ  
ելին։

Աղեքսանը գործում եր, որու գիշեր դադար  
չուներ, քուն չուներ։

Մի ասիլ՝ զյուղում եսքան գժար գործեր  
կան, մի ասիլ՝ եսքան բաներ են անցկենում, —  
ասում եր նա։

34.

Ասուի սպանությունից հետո Սերոն ել ա-  
վելի փաթաթվեց կոմսոմոլին։

Սերոն սիրում եր Աղեքսանին, նրա համա-  
ռությունը, նրա անվճառությունը Սերովն յե-  
ռանդ եր ներշնչում։

Մուքելի ամեն միշեթ նայվածքից դեպի  
կոլեկտիվը՝ Սերով մեջ սպաքարը հրդեհվում  
եր, Սերոն ասում եր վճռական։

— Ապի, զու ըտենց վնա, յես եսենց կդնամ։  
Դու չես ընկերանում Աղեքսանի հետ, յես եմ ըն-  
կերանում։

Մուքելը խոտվ եր պահում կոլեկտիվի ան-  
դամների հետ և մի անգամ հաշա աչքով չեր նա-  
յում նրանց վրա։ Նա առանձնանում եր գո-  
մում ու յերկար ժամանակ անտեղից դուրս չեր  
դալիս։

Եթի զոմը գնաց, իր սիրած տեղը շփեց յե-  
ղի ձակատն ու հասուչեց։

Մսուրի տակ յերկու պարկ ցորեն եր պա-  
հել, վորի մասին մենակ ինքը դիտեր, մեկ ել  
յեղը պարկերին վսաքով խփեց։

— Ե՛ն, փառք ասածու, տոռով ա, մի հատ,  
յերկու հատ եսենց ել կավելացնեմ, ու յեղու  
կջխտվի. — մոտեցավ, զլուխը զրեց յեղան մեջ  
քին ու շնչացաց։

— Դու իմ հիս նսկերն ես, զու իմ պապա-  
կան ամսիցն ես, զու իմ մտերիմն ես, յեղը ջան։  
Ի՞նչ անենք, աշխարքը փոխվել ա, քու գինն ել  
ա ընկնում, իմ զորությունն ել ա ընկնում։  
Հարամու պես ուրիշ թափուր գութան ու բան են  
արշա ընկել, հիմիկ ել մեր նսկերության մեջ են  
ուզում բերեն։ — Նայեց յեղի աշքերին ու շարու-  
նակեց. — Այ անասուն զու յել ես հասկանում,  
աչքերիցդ կրակ ա թափվում, միադ են զայխ  
ընկերներդ՝ Ծաղիկը, Մանիշակը... Յես քեզ սի-  
րում եմ, յես քեզ առանցի թայի թողալ չեմ. —  
Ճեռքը զցեց յեղի պարանոցով։

Մուքելի կինը հետեւմ եր նրան, նենց շեմ-  
բում կանգնեց։

— Մասնիչի պես ինչ եք մարդի յեարից  
ման զայխ, միքիչ դինջ թաղեք, ելի։

— Այ մարդ, վախում եմ՝ գժվես. ի՞նչ ցավ

անես, և հիմի յել սովոր չենք ու հասած կոմ-  
սոմոլ տղա ունես:

### Մուքելը հասաչեց.

Իմ ցավը ոչով հասկանում չի, յես աշխար-  
քի վոչ տակին եմ, վոչ գլխին, մի թափուր եմ...

Նա շշմած՝ կանգնել եր գոմի մեջտեղը,  
կինը ցափակցությամբ շրթունքները հպել եր:

— Վոնց վոր մի խամ աչառ, սրանց մեջն եմ  
ընկել, ամեն կանից բզահարում են: Դենքն եմ զնում  
պապերիս քամակից, սիրառ ցափում ա, դեսն եմ  
գալիս, ելի սիրառ ցափում ա...

Դու յել մեր ջահելի հետ գնա, ելի՛, ի՞նչ  
ունես ուրիշ-ուրիշ ցավերի մեջ ես քեզ գցում. յես  
ձեր միջին փոթոթվում եմ,—լացակումեց կինը:

— Ի՞նչ անեմ, ես թափուր մտածմունքներով  
իմ ոսկորները քարացել են, հիմի նոր յես կոմ-  
սոմոլ չպիտի դառնամ... ես մեր հնկերությունը  
կոմսոմոյների հնկերության պես մի բան ա, ե...—  
մատը ցցեց.—Բա ես յեզին եսենց տենամ...

Կինը չեր հասկանում նրա տանջանքները.  
մերթ ցափակցում եր, մերթ զայրանում նրա վրա  
ու չգիտեր ինչպես համոզեր: Նա նեղացած հե-  
ռացավ:

### Մուքելը գնաց Յեգորի մոտ:

Յեգորը շուտ եր համոզվում. Յեգորը ցա-  
փակցում եր Մուքելին ու զլուխը տմբացնում.  
եդ միքիչ համուսացնում եր Մուքելին:

— Յեղար, մեր կոլեկտիվիցը քու խեցն  
ի՞նչ ու կարում, Ավեքսանի միաքն ի՞նչ ա, վոր  
աշխատենք, քրաբինք թափենք, յետով ել չիմա-  
նոնք իմն ու քունը վորն ա, մեր երեխեքն ել  
ետենց զնամն: Յես վոր իմանայի, թե ես հնկերու-  
թյան մեջ ըսենց ծրագիր կա, յես գժվել ելի իմ  
հալալ արինը հարամելի:

Յեգորը զլուխը տմբացնում եր:

— Այ անաքանդ, մի բան ասա, ելի. — նե-  
ղացավ Մուքելը:

— Վոնց վոր գուզ ես ասում, Մուքել, հա-  
մա վոնց վոր Ավեքսանն ել զուզ ա ասում...

Մուքելը Յեգորին խեթ նայեց.

— Այ մարդ, զլուխը տմբացնում ես, համ  
ես ասում, համ են... քեզանից մարդ զլուխ չի  
հանում. ասա, ելիւ որտովդ ա:

— Վոնց վոր լավ ա գործը գնում. հիմի երե-  
խեքս լավ են, բորբիկ ու ճղոտված չեն,—պատաս-  
խանեց Յեգորը:

— Կայ տամ ես զլուխս, մի գուզ խոսք ա-  
սող չկա, սազն ել ծովել են, մի գուզ հնկեր  
չկա, վոր սրտովդ ըլի, խելք-խելքի տաք... ես  
վորտեղից վորտեղ եկան մեր սիրտը պաժար գյե-  
ցին. հաղաղ են, գինջ են, համա ելի մտիկ տանք...

Մուքելը խոռված գնաց:

Կողեկափի անդամները հավաքել ելին Արքսանի անակը. խորհրդակցություն եր:

Մուքեն ու Յեգորը մեջք-մեջքի ելին ավելու նստել թախտի մի ծալքին, կանալք, յերեխասերը շարվել ելին իրար կողքի. Ուանի կինն առանձին պազել եր Մուքելի դիմաց, իսկ մեջտեղը Արքսանը, վորի խոժոռ ու համառ հայացքը հակում եր բոլորին: Բացակայում ելին Սերոն ու Նոյեմը:

Մեծ ու փոքր նայում ելին Արքսանի բերանին. նա սկսեց. պատմեց կողեկափի դրությունից.

— Վանց վոր տեսնում եք, մեր կողեկափիը մեծ գործ անում, մենք մեր իշխանության զծած խազով ենք գնում: Համա թաղա յենք սկսել ես գործն ու ելի շատ բան ունենք անելու. հիմի պետք ամտածենք ես քոնջերիցը դուրս գանք, մարդավարի ըլենք, իսկ դրա համար հարկավոր ա....

— Դուզ ա,—նրա խոսքը կարեց Յեգորը.— Իրեն իմ առնը կաթում ա. զոմիս պատը բանդվել ա:

Մուքելը նրան մեջքով հրեց ու կամաց շարուցաց.

— Այ, դրան եմ ասում, վոր կողեկափիը մեղ բան չի տալ:

Յեգորը զլուխը կախեց:

— Յեղներին ուտել ապետք ու ես տարի խոսը պակաս ա: Այեքսան, զրա մասին ինչ պետք անհնք. վրա բերեց Գարոն:

Ապա անհամբեր ու նեղացած խոսեց Ոհանի կինը.

— Ա՛յ, գլխիս շորին մտիկ արեք, վանց արծծվել, ու տեղաշորներիս յերես-աստառ չունենք. դե թող կովեկտիվը առնի...

— Ել ինչ ես պճպանում. խոսքն ասելիս զինջ տառ, — նկատեց Ոհանը, բարկացած ու դժկամ նայեց կնոջ վրա:

Արքսանը լուս, հոնքերը խոժոռած լսում եր:

Յերեխաներից միքանիսը բարձրացրին իրենց վոսներն ու ցուց տվին ծակ արեխները: Կովեկափի անդամները նայեցին ծակ արեխներին:

— Դե բոլ ա, վոսներդ քաշեցեք, — ասաց Ոհանը ու նայեց Արքսանին, վոր ուշադիր նայում եր չորս կողմը:

— Պակասություն շատ ունենք, — ասաց Յեգորը:

— Ախպեր, գե բոլ ա, գիտենք, վոր պակասություններ ունենք, դուք ուզում եք միանդամից, — ելի խոսեց Ոհանը:

— Դուզ ա, — ասաց Գարոն:

— Արքսան, դու ինչ կասես, — հարցըց Ոհանը:

— Յես ել հենց զրանք եմ մտածում—վոր գումար նոր ա, դժվարություններ ել շատ ա. համա մենք մեղ քոմակ անելով, մեր իշխանությունն ել քոմակ անելով, ամենաառաջ մեր հողումը պետք ա մաշին բանացնենք, արակտոր բերենք. յես ասում եմ՝ ամենաառաջ եդ պետք ա ըլի, մնացածները մանր բաներ են, կամաց-կամաց:

— Տրակտոր, — կրկնեցին մյուսները:

— Տրակտո, փին, — կրկնեց Մուքելը: Ասում են՝ մուկը ծակը չեր մտնում, ցախավելը պոչիցը կապեցին. հիմի մերն ա. համ եսքան դարդեր ունենք, մի մաշին ել բերենք, ջուռա-ջուռա սահմանքներ. — շնչաց Մուքելը ու վշտացած գլուխը կախեց:

Յեգորը նայեց Մուքելին ու ինքն ել գլուխը կախեց:

— Կասես գուղ ա ասում Ալեքսանը, հը, Մուքել, հարցըրեց նա:

— Զահրումար ա անում...

Յեգորը դժվարությամբ եր շնչում. նա վորքան ուրախ կիմներ, յեթե յերկու կարծիք չլիներ, յեթե Մուքելն ել Ալեքսանի նման մտածեր. ես ժամանակ ինքը միանգամից մի կողմը կիմնեւ, իսկ այժմ մեկ նրան եր նոյնում, մեկ մյուսին:

— Հը, ինչի՞ չեք ել խոսում. ասեք, ելի: չըլի՞ թե դժվարանում եք. — հաշեց Ալեքսանի ձախը:

Ոհանն ու Գարոն ուրախ բացականչեցին.

— Ալեքսան ջան, վոնց վոր ոգուտ ա, ապահով կըլի յերկիրը, լավ կապրենք. թող հենց ըլի, վոնց վոր առաջավոր ա՝ հնենց կանենք:

Յեգորը գլխով համաձայնություն ցուց տվեց նրանց ասածներին. կանաչք ու յերեխաները լուռ խորհրդավորությամբ լուսմ ելին:

— Մեծ ու պստիկ ընկերներ ջան, շարունակեց Ալեքսանը — հիմի պիտի խնայող ապրենք, սաղ մի տեղ հավաքենք ավելցուկը, վոր կարենանք եղ մաշինեն բերել: ինչքան մեղ յեղ, կով վոչխար ունենք, պետք ա ծախենք, վող շինենք ու մաշին բերենք. նրանից գենը մեր գործը հեշտ կիմնի:

— Փին, — արանջաց Մուքելը, — փին, եդ եր պակաս:

— Յեգոր, իմանում ես՝ ինչ ա ասում. դէ հիմի հավանի դրա խոսքերը:

Յեգորն անհանգիստ շարժվում եր տեղում:

Ոհանը չեր շարժվում. Ոհանը հետեւում եր Ալեքսանի մաքերին:

— Դուզ ես ասում, Ալեքսան, հետո վոր մաշինը բանի, լավ բերք ունենանք, ելի կով կառնենք, ելի վոչխար կունենանք. — ասաց նա:

— Հա, ինչ եմ ասել, — համաձայնեց Գարոն:

— Բանցով պետք ա մեր ես ջոջ-ջոկ արնակությունները միտեւդ անենք ու մարդաթարի ապրենք:

Հերթով նայեց բոլորի յերեսին. առանձնապես հայացքը կանգ առավ Մուքելի վրա:

Մուքելը դժկամությամբ կոկորդը մաքրեց.

— Ասա՞ մեր պապերը գերեզմանումը շուռ եկան... աշխարքի խելքն ու սահմանքը նրանք են գրել, հիմիկ սրանք հավան չեն, քանդում են: Ախպեր, շնորհակալ ենք, հաղաղություն սիրող ա, քոմակ անող իշխանություն ա, համա նեք սկից խանակում ա, տակ ու զլուխ ա անում:

— Թող շուռ գան, մեզ ինչ. մեռելների համար ել վոր մտածենք, մեր գործն առաջ չի գնա: Բա վոր տակն ու զլուխ չանի, ել ինչի կուսակցություն ա, ել ինչի իշխանություն ա: — Պատասխանեց Ալեքսանը Մուքելի շնչոցին:

Ոհանի կինը յերեսը խաչակնքեց.

— Վնչէ քոռանամ յես. հիմի նամիս բընկարվեր եկավ, ոսկորները շաղ եկան. — ու բերանը ծուած՝ նայեց Մուքելին:

Ոհանը կանգնեց.

— Հնկերտինք ջան, մեծ ու պուճուր ջան, մենք ամենայն տնանկն ելինք, սոված ելինք. մեզ ջարդում ելին, դուզ ա, թե չե. մեր հարուսար գլխներիս կակալ եր կոտրում: Ես իշխանությունը մեր սրտին ալ ազլուխ կապեց. այսինքն թե՝ մենք մի բան ել ա չկորցրինք. համ մի մեծ բան գտանք եղ մեր իշխանությունն ա, հիմիկ ասում

եմ մենք ել սոյիալիտարկան առաջավորությամբ կերթանը. բայց գե ես անցկենալիք ճամպեն քառա ա, պետք ա բարելը գեն շպրտենք ու գնանք, դրա համար չպետք ա վհասություն քաշենք:

Վոգեորությունից վոտքերը դողում ելին:

— Յես ել եղ եմ ասում, — տեղից կանգնեց Գարոն ու ելի նստեց:

Յեզորը գլխով համաձայնության նշան եր անում:

Մուքելի համբերությունը լցվեց. կանգնեց հազիվ մեջքը դրստելով, կասես մեկը դիմին խփում եր:

— Յես վաղուց պետք ա ասելի. յես մտակցում չեմ եղ գործին. յես եղքամ ասածների հետ համաձայն չեմ: իմ մեռելներին գերեզմանումը թարսեցիք. յես եղքամ բանը տանող չեմ...

Ոհանի կինն աղերսական ու աչքերն արցունքոտ նայում եր Մուքելին.

— Հա, հա, եղ ասա. անհասովածություն ա, մեղքումը կորանք:

Մուքելը շարունակեց.

— Պետք ա ասեմ, վոր Ալեքսանը միքիչ լավ ժաժ չի զալի. ինքն երկու տարի ուրիշ աեղ ա մեացել ուրիշ ոդ ա ծծել ու ուրիշ դնի մարդ դառել. հիմի մեր գլխին անհավատք, թագա շինած բաներ ա ասում, Խելքներս դլուխներս չա-

վաքենք. զա մեզ ուզում ա յեղից զցի ու մաշի՛նի ուժադին թստա. լաս վոնց չե՛ Յես Մուքելու վի բալշեիկ չեմ. յես Մուքելն եմ ու պապեր ունեմ. յես գեղացի չեմ, սանչպար եմ, յեզով բանող մարդ եմ: Յես Ալեքսանի պես կարում չեմ մտածեմ, գլուխս արաքում ա... փիլա:

Ալեքսանը ժպառում եր՝ աջ արմունկը սեղանին հենած ու բոռնցքը ծնոտի տակ:

Յեղորը վոնց վոր զողացնում եր ու իրան լավ չեր զգում.

— Աղա, ինձ շշկացնում եք, — ասաց նա Մուքելին:

— Քաշի, ջանդ դուրս զա — պատասխանեց Մուքելը:

— Դու գնա, քու յեզը բանացրու, պապերիդ հասի. մեր տրակտորովը մեր նպատակին հասնենք. տեսնենք ով ում կփոշմանացնի. — ասաց Ալեքսանը հանգիստ տոնով:

Յեղորն ազատ շունչ քաշեց.

— Հաա, եղ ել ես դուզ ասում, Ալեքսան...  
— Զուր բան ա, սուտ բան ա, — ասում եր Մուքելը:

— Այ մարդ, — Մուքելի փեշից քաշում եր կինը, — այ մարդ, խախտառակվեցիր. Ոհանն ու Գարոն կանգնեցին.

— Մուքել, ամոթ ա, ընկերության մեջ ըտենց

չեն խոսի, յերեխանցից քաշվի, մեր Ալեքսանին զու վճնց ևս ճանանչում. թող սազ զեղին առի վոր նրան կառավարիչ, զյուղիորհուրդ ու ընտրել: Յեղորը գլուխը ամբացնում եր:

Ներս մտան՝ նոյեմը, Սերոն ու մեկն ել Ոհանի տղան, կարմիր-բանակալինը:

Աղմուկ, ուրախություն բարձրացավ, հայցքները գարձան նրանց կողմը:

Հայր ու վորդի համբուրվեցին .. մայրը չոք-չոք ընկավ տղայի վոտքերը. տղան բարձրացը մորն ու հերթով բարեկց բոլորին, առանձնապես ուշադիր և սեղմ թափահարեց Ալեքսանի ձեռքը:

— Կոլեկտիվի անդամներն ավելացան. հիմի աշվելի լավ կմտածենք ու վորոշում կանենք, — ասաց Ալեքսանը. — Ես զոսով զործ չի. դուզ ա, պակասություններ շատ ունենք. ում խելքը չվկարում, թող կոլեկտիվիցը դուրս զա. նրա աեզը ուրիշները ընկերանում են ու տրակտորի գործում ձեռք են տալիս մեզ. ես մի բանը լավ իմացեք, վոր իշխանությունը մեզ հետ ա, մեզ ովնում ա:

Սերոն նայեց իր հորը, կարմիր-բանակալին Սիմոնն ել իր հորը. նոյեմը ժպառում եր:

Մուքելը ցածը շշնչաց.

— Յես... համաձայն չեմ... — Մեջքը գարձրեց դեպի նրանց ու գլխիկոր նստեց:

Յեղորը մեջքով հենված նրան՝ յերեսով դարձավ գեպի Ալեքսանը:

— Իմ ճոր տեղակ յեռ եմ, — ասաց Մերսի:  
— Մենք ուզում ենք, վոր մաշինս բերենք  
ու կոլեկտիվ մնանք, — ասացին Ոհանն ու Գա-  
րսին:

— Յես ել ինչքան կարամ, կոլեկտիվին ող-  
տակար կլինեմ, — ասաց Ոհաննի տղան՝ կարմիր-բա-  
զակալինը:

Յեգորն ել տեղից կանգնեց, նայեց չորս  
կողմին ու հենվեց Ոհանին:

— Ադա, պակասություններ շատ ունենք.  
— Ապի, ապի, մեզ համար շորեր առեք. մեզ  
համար չուստեր առեք... — բացականչեցին յերե-  
խանները:

Հնչեց Ալեքսանի ձախը.

Հլամ կեզտոս ենք, շորեր չունենք, հա-  
մա չենք վհատվիլ, մաշինեն իբերենք, լավ կլինի,  
ըստոց կերթանք քոմակով, մեծ ու պատիկ բն-  
կերներ ջան:

Մուքելը մենակ նստած՝ գլուխը կախել եր  
ու քիչ եր մնում յերեխի պես հեկեկար...

Զոռը տանում ա. խոսքն առաջ ա տո-  
նում. Պապուշի մեջն ել հալ չմնաց, վոր նրան մո-  
ափկանամ, ես աշխարիցն իմ գլուխը բան չի  
հանում. — շնչում եր նա առանձին, ինքն իր հա-  
մար.

36.

Մայրերը կոոպերատիվից ելին զնել ու նոր  
կարել նրանց համար. կոլեկտիվի յերեխանները  
մի գույն չմի շորեր ելին հագել:

Իրենց տնակների առաջ, մի մեծ տարածու-  
թյան վրա արտ ելին շինել, խաղում ելին:

Ալեքսանի տղան մի փայտի վրա կարմիր  
կտոր եր կապել ու անկել արախ մեջտեղը:

Մեջը չմանեք, — բզավում եր նա, հոնքե-  
րը խոժուած՝ մեծ պահապանի պես:

Չորացած խոտեր ելին հավաքում, բերում,  
դարսում, վորպես թե ցորենի խուրձերն ելին:  
Վաղվզում ելին, կանում, բարձրանում, ու խաղն  
այնպես կենդանի ու արագ եր ընթանում:

Մայրերը շեմքերից նայում ելին, իրար աշ-  
քով անում:

Մուքելն իրեն գոմի գոան ձեղքից նայում  
եր, գլուխը պտտում.

— Այ փշանաք գուք, հա, ինչ փշացել եք.  
յերեխեքն ել իրանց մեծերի պես են ժաժ գալի,  
մտիկ տվեք Ալեքսանի փշին, վնաց ա գոռզոսում:

Մերոն ու նոյենը ստվերում նստած կարգում  
ելին:

Մի խումբ զբուղացիների հետ Ոհանն ու Ա-  
լեքսանը շտապ գնացին:

Մենք մեր ունեցածիցը կտանք:

## Ալեքսանդր ասաց.

— Բան սովորեք, ամեն մի որբ ձեզ համար լւանդ ա, հրամ ջահել եք, հրամ զուք շատ պետքական եք:

Նա համբուրեց Նոյեմի ճակատն ու թափահարեց Սերոլի ձեռքը:

Ոհանն ու մյուսներն ել ձեռքերը սեղմեցին ու ասացին.

Մեր կողեկտիվի համար, համ, մեզ չմոռանաք...

Ալեքսանդր յերկար ժամանակ քարացել եր, նայում եր նրանց յետելից՝ ծնունդներն՝ անշարժ, հայացքը՝ հեռու:

Յերեխաները վագում ելին ձիերի քամակից. Սերոն ու Նոյեմը յետ-յետ ելին նայում, ժպտում:

Իոկ Մուքելը մի հատիկ յեզը գոմին եր քշում. մէջքը կորացել եր, քայլերը թուղ ելին. գեմքի վրա դժկան ու հուսահատ կնճիռներ ելին չորտցել, հառաջում եր խուլ, անլոելի.

— Տղիս չոլերը զցեցին, տղիս ինձանից ջուկցին. Ալեքսան, յեկածդ ճամպին չորանար...

Յերեխաներն ահաղին տեղ վազել ելին ու յետ ելին դառնում: Զիերն ել չելին յերեռում, անցել ելին այն ճանապարհո, վորակելից մի ժամանակ թռչում եր բրոնզադույն ու խոշորադեմ մորդը:

Հիշեց Ալեքսանը, միքանի վայրկյան մտազբաղ գլուխը բանեց:

— Ալեքսան:

— Հնկեր Ալեքսան...

Ալեքսանն սթափվեց. խոժոռված ճակատը պարզվեց:

Միքանի ուրիշ գլուղացիներ կանգնել ելն նրա կողքին.

— Մենք ենք, զործի համար ենք յեկել:

— Մենք ուզում ենք եզ մաշինին հնկերաններ:

— Ալեքսան, հիմի ինչ ես ասում, քու խեցը մերիցը շատ ա...

— Ասա, զլուխ զալու բան ա, մենք ել փոք դնենք:

Ասում ելին նրանք, իրար խոռք լրացնելով:

— Սպասեք, յավաշ, գեսն եկեք, ասաց Ալեքսանը: Հիմի հայցն եսպես ա. մենք խոնդրիլ ենք կառավարությանը. գուք եզ զիտեք, բայ պետք ա մենք ել բայականին զումար ունենանք, վոր արակարոր կարենանք բերենք: Հո հեշտ չի, մաշինա յա, կոսա խարությունն անքան ուժ չունի, վոր առանց փող մաշին բաց թողնի. Հիմի հարցն եղանա ա. համ ել մեղանից մեկ յերկաւը պետք ա քաղաք զնան, վոր հետեւն, զործը զլուխ զա, եղանա ա, զործը զմարտթյուն ունի:

— Հնկեր Ալեքսան, մենք մեր տավարիցը  
ծախում ենք ու համաձայնվում ենք, վոր դու  
զնաս քաղաք:

— Մենք ել,—ասացին մյուսները:

— Իմ վոսները ցավոտ են, դուք զիտեք, ու  
գեղութիւն ել շատ գործ ունեմ. չեմ կարող մի ու-  
րիշն ընտրեք, վոր զնա եղ գործի մասին մաս-  
ծի:

— Լավ, հնկեր Ոհանին ենք զբկում, նա յել  
հասկացող առ ու լավ գործ անող ա,—առաջարկեց  
զյուղացիներից մեկը:

— Թող եգողես ըլի, լավ, թող Ոհանը գնա,  
մեկ ել ձեզանից մի հոգի, —ասաց Ալեքսանը:

— Դրան ել ենք համաձայն, թող երկու հո-  
գի գնան:

Ու զյուցելով Ալեքսանի հետ գնացին:

---

Միքանի շարթից հետո Ալեքսանն Ոհանին  
զբություններ տվեց ու յերկար խոսեց նրա հետ.

— Գնա, Ոհան, գործը գլուխ բեր ենաեղ,  
յես ել եստեղ —թող մաշինը գեղը մանի. մեր հո-  
գերը տափ տեղ են, մաշին բանացնելու հարմար  
են. մեր կողեկախիլի գործը կհեշտանա. մեր կո-  
ւեկախիլը կուժովանա:

Հանձնարարություններ ստամալով՝ Ոհանն  
ու մյուս զյուղացին ճանապարհվեցին քաղաք:

Ալեքսանի դեմքը են որը կարծես բրոնզա-  
նման լիներ, բայց ես անգամ հուսավառ փազով  
փողողվել եր նրա ճակատը. նա շնչաց.

«Ես չուրն իրա ճամպովը կդնա»:

Դարաբիլիսա

1927 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0330030

21.7.02



ԳՐԱԴ 50 Կ.

(B)

(C)

891.99
2h-85